№ 234 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26

1906

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 № 234

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ

„ՄՇԱԿ"

Լրագիրը արժէ 2 րուբլի։ Մի ամսվանը 1 րուբլի։

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտարարում է, որ արդէն ստացված է «ԳԵՂՋՈՒՀԻՆ»։ Առ այժմ ստացված են 300 օրինակ։ Բոլոր 1000 օրինակներից գոյացած արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների։ Ցանկացողները՝ ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ դահլիճի ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, թող շտապեն՝ ուղարկելով գինը 4 ր. և ճանապարհածախսի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կ., դիմելով կամ «Մշակի» խմբագրատունը, Յանձնաժողովի անդամ-քարտ.պ. Հ. Առաքելեանին, «Գուտտենբերգ» և Կենտր. գրավաճառանոցը կամ «Երկրի» խմբագրատունը իսկ ԲԱԳՎՈՒՄ ցանկացողները կարող են ստանալ Թ. Բունեաթեանի գրախանութից, հայոց եկեղեցուն կից։

տա. 4—5

Կիրակի, նոյեմբերի 29-ին,

Առաւօտեան ժամը 10-ին, կը կայանայ յուլիսի 30-ին կայացած

Թիֆլիսի Առեւտրական Նաւարդիւնաբերական Ընկերութեան

բաժնետէրերի արտակարգ ընդհանուր ժողովի շարունակութիւնը, ի նկատի ունենալով քննվելի հարցերի կարևորութիւնը, խնդրում են պ. պ. բաժնետէրերին անպատճառ շնորհ բերել։

(և. հ. շ.) տա. 2—3

Պատիւ ունիմ յայտնելու Թիֆլիսի յարգոյ հասարակութեան, որ կարճ միջոցով մնում եմ Թիֆլիս քաղաքում, «Վերսալ» հիւրանոցում, Վորոնցովի արձանի մօտ, համար 4—5։

ՀԻՐՈՄԱՆՏԻԿ

Տիկին Անաստասիա Իւրիեվնա ԿՈՆՍՏԱՆՏԻՆԻԴԻ

Գուշակում է ձեռքի ափի գծերով մարդուս բաղդաւորութիւնը և նոյնպէս գուշակում է անսխալ կերպով մարդուս անցեալը, ներկան և ապագան։ Հաջակաւոր ընդունելութիւն է գտել արտասահմանի և Ռուսաստանի զանազան մեծ քաղաքներում։

Ընդունում է ամեն օր, առաւօտեան ժամի 9-ից մինչև 1-ը և 3-ից մինչև 6-ը։

Սէանսի վճարը 1 ր. այցելողից, իսկ ուսանողներից 50 կոպէկ։

տա. (կ. և. հ. շ.) 3—4

ԼԱԿՏՕԲԱՑԻԼԵԱՆ ԿԱԹ

ՊՐՕՖ. ՄԵՉՆԻԿՕՎԻ

Ցուցմունքների համաձայն պատրաստվում է

ՊՐՕՎԻԶՕՐ

Ա. Ս. ԿԼԵԲԱՆՍԿՈՒ

Քիմիկօ-բակտերիօլօգիական կաբինետում,
Վորոնցովի արձանի դիմաց։

Հեռախօս № 389.

(և. չ. հ. ու. կ.) տա. յ. կ. 3—10

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Տեղափոխվեց Միքայէլեան փողոց № 27.

Ընդունելութիւն ներքին և ջղային հիւանդութիւնների. առաւօտեան 9—11 ժ. երեկոյեան 5—7 ժամը։

տա. 5—5

ԲԺԻՇԿ

Տ. Խախանեան

վերադարձել է արտասահմանից ու վերսկսել հիւանդների ընդունելութիւնը։

Սերգիեվսկայա փող. Փրիդոնովի տուն № 15.

(և. հ. շ.) տա. 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հսկողութեան կարևորութիւն. Վերջին տեղեկութիւններ. Կուսակցութիւնների շուրջը. Ընտրութիւնների շուրջը. Կարծիքների տարբերութիւն. Ջուր տեղ մխիթարում էք ձեզ. Մամուլ. Մտքեր և փաստեր. Մի կտոր չոր հաց ենք ուզում. Ընտրութիւնների շուրջը. Ազատագրական շարժումը և ռուս հոգեբանութիւնը. «Հայլի Մաթին» լրագիրը հայերի մասին. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Սուրամից. Մի էջ սխրագործութիւններից. Ներսէս վ. Մելիք-Թանգեանը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ

I

Մեզ գանգատվում են, որ այս ու այն եկեղեցիներում բարեգործական նպատակով արած նուէրները կորել են և նրանց հետքն անգամ չէ մնացել։

Մեզ, օրինակ, յայտնի են եկեղեցիներին արած արժէքաւոր նուէրներ, որոնք ներկայումս գոյութիւն չունեն և յայտնի չէ թէ ով է նրանց իւրացրել։

Մենք մտադրութիւն չունենք ներկայումս մասնացոյց լինել առանձին փաստերի վրա և ցանկանում ենք միայն արձանագրել այդ տխուր երեւոյթը և դարձնել նրա վրա ուշադրութիւն։

Նուէրները, որոնք անվում են զանազան անձերի կողմից զանազան նպատակներով, պէտք է որոշ եղանակով ապահովված լինեն կորստից և ստանան իրանց համար նշանակված գործադրութիւնը։

II

Նուէրների ցուցակագրութիւնը պէտք է կատարվի առանձին եղանակով, քան եկեղեցիների միւս մուտքերը, որովհետև նրանցից շատերը յարատև գործադրութեան բնաւորութիւն ունեն և չեն կազմում միայն որոշ տարվայ եկամուտը։

Եւ լաւ կը լինէր, որ թեմական վարչութիւնը իւրաքանչիւր տարի առանձին թերթով հրատարակէր եղած նուէրների ցուցակները, որպէս զի նրանք այդպիսով հրապարակական ձև ստանային և ծառայէին իբրև վկայաթուղթ, միևնոյն ժամանակ խրախոյսի առիթ դառնային շատերի համար հետևելու բարեգործութեան օրինակներին և այդպիսով բաւաբարութիւն տային համայնքների այս ու այն կարիքին։

III

Նուիրատուութիւնների ապահովութիւնը մեծ զարկ կը տար նրանց բազմանալուն։

Մանաւանդ այժմ, երբ համայնքները սկսում են ինքնագործութեան հրաւիրվել, պէտք է պահեն դպրոցներ, և զանազան հիմնարկութիւններ և ուրեմն պէտք ունեն բազմատեսակ օգնութեան թէ համայնքի անդամների և թէ ուրիշ համակրողների կողմից, կարևոր է, որ իւրաքանչիւր նուիրատու բոլորովին ապահով լինի, որ նրա արած նպաստը ճշտութեամբ տեղ է հասել և ծառայում է այն նպատակին, որի համար նշանակված է։

[illegible] իւրաքանչիւր ծխական համայնք պէտք է հսկէ իր գումարների վրա, բայց ցանկալի է, որ այդ գործում ընդհանուր հսկողութիւն ունենար թեմական վարչութիւնը։

IV

Եւ առհասարակ պէտք է մշակել համայնքներին պատկանող գումարների և գոյքերի պահպանութեան համար որոշ կանոններ, որոնց համայնքները հետևէին, որպէս զի կորուստներ տեղի չունենային։

Անհրաժեշտ է, որ մի անգամից բոլոր համայնքներում կազմվէին ցուցակներ եղած յատուկ գումարների մասին և բոլորը արձանագրվէր, որպէս զի գոնէ այնուհետև չը լինէին կորուստներ։

Մեզ յայտնի են դէպքեր, որտեղ անհոգութիւնից և հսկողութեան բացակայութիւնից մոռացվել են գումարներ և գոյքեր և յետոյ բոլորովին անհետացել։

Պէտք է այդ հսկողութիւնը սահմանել։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիրզջեան գիւղ, 14 նոյեմբերի

Մեր գիւղի դրութիւնը այժմս անտանելի է։ Նոյեմբերի 10-ին, առաւօտեան ժամը 8-ին, մեր գիւղացի Կարապետ Փիրվերդեանը, 16 տարեկան, վերցնելով իր փոքրիկ եղբայր Անդրէասին, գնում է գիւղից 2 վերստ հեռաւորութեամբ իր սեփական կալուածներում ցորեն վարելու։ Մօտաւորապէս ժամի 10-ին, Փիրասանլի գիւղացի երկու Թուրք հովիւներ մօտեցնում են իրանց ոչխարները յիշեալ Կարապետի վարած արտին և սկսում են արածացնել։ Կարապետը խնդրում է ոչխարները դուրս հանել արտից, սակայն հովիւներից աւելի մեծը, Հասան-Ալի Բաղիր-օղլին, 20 տարեկան, խիստ հայհոյում է և դաշոյնը մերկացրած մօտենում է լծած գոմէշները բացելու։ Նոյն վայրկեանին Կարապետը, տեսնելով իր կրիտիկական դրութիւնը, վազում է դիմադրելու։ Այդ ժամանակ հովիւներից մեկը իր մեծ փայտով սկսում է ծեծել Կարապետին, որը փայտի հարուածներից ընկնում է գետինը։ Հասան-Ալի Բաղիր-օղլին իսկոյն ատրճանակը հանում է կրակելու Կարապետի վրա. այդ րոպէին Կարապետի փոքրիկ եղբայրը, 10 տարեկան երեխայ, տեսնելով իր եղբօր վիճակը, վրա է հասնում և ետևի կողմից Թուրքի ձեռքիցն է կպչում. Կարապետը, օգտվելով այդ հանգամանքից, վերցնում է իր մօտ ընկած որսի հրացանը և սպանում Հասան-Ալիին։ Կարապետը, թողնելով լծած գոմէշները, արօրն և շատ ուրիշ իրեղէններ, փախչում է դէպի գիւղը, ազատելով և իր փոքրիկ եղբօրը։ Փիրասանլուն, որ շատ հեռու չէր գտնվում այդտեղից, մօտաւորապէս 2 վերստի վրա, շուտ օգնութեան են հասնում բերդանկներով և սկսում են հալածել մեր սեփական հողերից բոլոր վար անող մշակներին, որոնցից շատերը թողնում են լծած գոմէշներն ու եզները և սերմած հողերն ու միայն իրանց գլուխն ազատում։ Փիրասանլուցիները քշում տանում են Կարապետի գոմէշներն ու արօրը, նոյնպէս և ուրիշ երկու զոյգ լծած գոմէշներ։

Եղելութիւնը իսկոյն յայտնում են տեղիս տանուտէր Սերոբ Ծատուրեանցին, որը վերցնելով իր հետ պրիստաւի օգնական պ. Ալիբէկովին, որը գործով Գիրզջան էր եկել, և մեր համագիւղացի պ. Ալէքսանդր Գեօզչյանեանցին գնում է Փիրասանլու՝ այնտեղի բնակիչներին հանգստացնելու, որպէսզի երկու երեխաների պատճառով այսքան ժամանակվայ պահպանած խաղաղութիւնը չը խախտվի։ Շնորհիւ Փիրասանլուի լաւ հասկացող իշխանների և պ. Ալէքսանդր Գեօզչյանեանցի արտասանած ճառերի, Փիրասանլուի բնակիչները առայժմս շատ ու քիչ հանգստանում են։ Տանուտէրն ու պրիստաւի օգնականը խնդրում են վերադարձնել բերած գոմէշները. իսկոյն խնդիրը յարդարվում է, սակայն Կարապետի գոմէշներ չեն տալիս, ասելով թէ չեն տեսել, այնինչ մի քանի գիրզջեանցիներ և քօվլուջեցիներ վկայութիւն տալիս թէ ինչպէս դաշոյնի հարուածներ տալով քշում էին գոմէշները։

Ահա երրորդ օրն, է մեր գիւղացիք փակված են և չեն կարողանում գնալ իրանց սերմած հողերը վարելու։

Ա. քահ. Փիրվերդեանց

—

Մուխրաւան գիւղից մեզ հաղորդում են հետևեալը. «Նոյեմբերի 23-ին, երեկոյեան ժամը 9-ին, ռուս խուլիգաններ նաւթ էին ածել Յովհաննէս Բաղդասարեանի տան վրա և վառել, իսկ իրանք անյայտացել էին։ Պարկի ֆելդֆեբելը հեռուից նկատել էր և յայտնեց այդ մասին Բաղդասարեանցին. եթէ չը տեղեկացնէր, ամբողջ կայքը և ընտանիքը կրակի զոհ կը դառնային։ Վնասը մօտ 100 րուբլու է հասնում։

Լևոն Դօվլաթեան

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—«Око» լրագրին հաղորդում են, որ ռուսաց սօցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութեան կենտրոնական րայոնի «մեծամասնական» կազմակերպութիւնների երկրորդ կօնֆերենցիան, որին մասնակցում էին 24 պատգամաւորներ կուսակցութեան 16,990 անդամների կողմից, առաջիկայ Պետական Դումայի ընտրութիւնների հարցի վերաբերմամբ ընդունել է, որ ներկայումս հիմք չը կայ պաշտպանելու բոյկոտի տակտիկան, և սօցիալ-դեմօկրատների մասնակցութիւնը ընտրողական պայքարին համարում է անհրաժեշտ։ Գալով մասնաւոր անձերից էքսպրօպրիացիաներ անելու հարցին, կօնֆերենցիան սօցիալ-դեմօկրատական կազմակերպութիւնների համար անթոյլատրելի է համարում ոչ միայն մասնակցելը այդ տեսակ էքսպրօպրիացիաներում, այլև այդպիսի միջոցներով որևէ գումար կորզելը։ Պետական դրամների գրաւումը նոյնպէս համարվում է անթոյլատրելի մինչև այդ հարցի վերաքննվելը յաջորդ համագումարում։ Բանւորական համագումարի հարցի վերաբերմամբ կօնֆերենցիան այդպիսի համագումար հրաւիրելը համարում է անժամանակ և ոչ ցանկալի։

—Ռուսաստանի հրէական ժողովրդի իրաւունքի հաւասարութեան ընկերութեան կենտրոնական կօմիտէն կարծիքներ (անկէտ) է հաւաքում հետևեալ հարցերի մասին. 1) Ինչպիսի միջոցներով, բաժանմունքի կարծիքով, հարկաւոր է կռուել սաստկացող հակահրէական ագիտացիայի դէմ և ինչ, մասնաւորապէս, վերաբերմունք է նկատվում գրականական պայքարի հարցի վերաբերմամբ։ Ի՞նչ տեսակ հրատարակութիւններ, տեղական պայմաններին նայելով, առանձնապէս ցանկալի կը լինէին։ Ի՞նչ ձևով կարելի է կազմակերպել այդ հրատարակութիւնների տարածումը։

2) Ինչպիսի տրամադրութիւն է նկատվում հրէայ ազգաբնակութեան մէջ վերջին ժամանակների քաղաքական անցքերի առիթով։ Ի՞նչ սպասելիքներ ունեն առաջիկայ ընտրութիւնների վերաբերմամբ։ Նկատվո՞ւմ է արդէն որևէ հետաքրքրութիւն դէպի նախընտրողական պատրաստութիւնները։

—Լեհաստանի և Լիտվայի սօցիալ-դեմօկրատիան որոշել է հրատարակել իր օրգանը ռուսերէն լեզուով։

—«Речь» լրագրին հաղորդում են, որ նոյեմբերի 11-ին լեհական պրօգրեսսիվ-դեմօկրատական կուսակցութեան լիդեր Սվենտոխովսկին մի ռեֆերատ է կարդացել «փոքրամասնութեան իրաւունքի մասին» և «մարդու ու քաղաքացու իրաւունքների մասին»։

Այն ժամանակ երբ պրօգրեսսիվ-դեմօկրատիան լեհական հասարակութեանը աշխատում է առաջնորդել պրօգրեսսի և ազատութեան ճանապարհով, ազգային-դեմօկրատիան աւելի ու աւելի է շեղվում դէպի ռէակցիայի ճանապարհը։ Պետական Դումայի նախկին անդամներից մի քանիսը, որոնք իր ժամանակին ընտրված էին իբրև այդ կուսակցութեան թեկնածուներ, այժմ նրանց աչքում երևում են արդէն չափազանց «ձախակողմեաններ» և նրանց փոխարէն մտադրութիւն կայ ընտրելու ուրիշներին, որոնք աւելի են «աջակողմեաններին հաւատարիմ», այդպէս, օրինակ, ժողովրդական դեմօկրատներին. Վարշաւայի կօմիտէտը որոշել է առաջիկայ ընտրութիւնների ժամանակ այլևս չը դնել կոմս Տիշկևիչի թեկնածութիւնը, որովհետև չը նայած որ նա արիստօկրատ է, այնուամենայնիւ նա չափազանց մեծ պրօգրեսսիստ դուրս եկաւ։ Կուսակցութիւնը նրա փոխարէն կը դնէ Ռօման Դմօվսկու թեկնածութիւնը, որը «Dzwon Polski» լրագրի մէջ տպագրած իր յօդուածներից արդէն յայտնի է իբրև կատաղի հակառակորդ օպպօզիցիօն կուսակցութիւնների։ Աւելի ևս պարզ երևաց ազգային-դեմօկրատների ծայրայեղ-ռէակցիօն բնաւորութիւնը իր կազմակերպած «Матица школъ»-ի խնդրում հրէայ երեխաների հարցի վերաբերմամբ։ Հրէայ ազգաբնակութեան մէջ կազմակերպվել էր մի շրջան, որը, ըմբռնելով տարրական դպրոցի մեծ նշանակութիւնը, կամենում էր «Մատիցա»-ին նիւթական աջակցութիւն ցոյց տալ, բայց բանից դուրս եկաւ, որ «Մատիցայի» դպրոցներում, թէև նրանք պաշտօնապէս յայտարարվում են որ բաց են անխտիր բոլոր դաւանութիւնների համար, հրէայ երեխաները չեն ընդունվում։ Երբ «Zudzkose» պրօգրեսսիվ լրագիրը այդ առիթով բողոք բարձրացրեց, ազգային-դեմօկրատների պաշտօնական օրգան «Dzwon Polski»-ն յայտնեց, որ «Մատիցան» շատ քիչ դպրոցներ ունի լեհական երեխաների համար, և հրէականների համար տեղ չը կայ։

Ազգային-դեմօկրատիան, սակայն, մոռանում էր, որ այդպիսի պատասխանի գինը պատկանում է ոչ թէ իրան, այլ «իսկական ռուս մարդկանց»...

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Պետերբուրգի թղթակիցները հաղորդում են պարիզեան լրագիրներին, որ ռուսաց կառավարութիւնը տաքտիքական նպատակներով ընտրութիւնների ժամանակը գաղտնի է պահում և կը յայտարարէ նրան օպպօզիցիօն կուսակցութիւնների համար բոլորովին անսպասելի կերպով, որպէսզի դրանով կարողանայ ապահովել իր կուսակիցների ընտրութիւնը։ Բայց պարիզեան մամուլը, ինչպէս հեռագրում են «Р. Сл.»-ին, այդ տաքտիկան համարում է անմիտ, որովհետև ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը, այնուամենայնիւ, կը յաղթէ աջակողմեան կուսակցութիւններին, և չափազանց վտանգաւոր, որովհետև եթէ ընտրութիւններին յաղթող հանդիսանան ռէակցիօն կուսակցութիւնները, այն ժամանակ Ռուսաստանում կը սկսվի երկարատև խաւար գիշերը։

—Կառավարչական շրջաններում եռանդով պատրաստութիւններ են տեսնում ընտրութիւնների համար։ Կառավարչական բոլոր հաստատութիւնների մէջ ցուցակագրում են բոլոր ընտրող չինովնիկներին, որոնց վրա յոյս է դրվում, որ նրանք ձայն կը տան իշխանութեան կողմից առաջարկված թեկնածուներին։

—«Око» լրագրին հաղորդում են, որ Բունդի կենտրոնական կօմիտէն VII համագումարի որոշման հիման վրա նամակով դիմել է իր կազմակերպութիւններին նախընտրողական լայն պայքար սկսել Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների համար։ Բունդի կենտրոնական կօմիտէն առաջարկում է կազմակերպել ընտրողական բիւրօներ ընտրութիւնների վերաբերեալ հարկաւոր տեղեկութիւններ տալու համար և ընտրութիւններին մասնակցելու հրաւիրել ոչ միայն կուսակցութեան անդամներին, այլ և նրանց, որոնք համակրում են նրա հայեացքներին։

—Պետերբուրգի քաղաքային հեռագրատան վարչութեան մէջ կախված է հետևեալ յայտարարութիւնը. «Առաջարկվում է քաղաքային հեռագրատան բոլոր ծառայողներին (որոնք 25 տարեկանից պակաս չեն և ապրում են Պետերբուրգում մի տարուց ոչ պակաս), որոնք Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն, ներկայանալ այդ վարչութեան դիւանատան I սեղանին, պարապմունքի ժամերում, ընտրողական ցուցակները լրացնելու համար»։

—Լեհական «Prawda» լրագիրը, որ պրօգրեսսիվ-դեմօկրատականների օրգանն է, խօսելով ազգային դեմօկրատների համար նպաստաւոր հանգամանքների մասին, որոնք ապահովում են նրանց աջողութիւնը Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ, նկատում է.

«Երբ ազգային դեմօկրատները բաց կանեն բոլորի առաջ իրանց ընդունակութիւնների ամբողջ ույժը և իրանց ձգտումների ամբողջ ուղղութիւնը, այն ժամանակ հասարակութիւնը կը տեսնէ նրանց քաղաքական, բարոյական և մտաւոր էութիւնը։ Այն ժամանակ նրանք կը դադարեն կօմեդիա խաղալուց և կը գրաւեն այնպիսի դիրք, որպիսին իրանց վայել է,—այսինքն նեղ ազգայնականութեան, տգիտութեան և ռէակցիօնութեան դիրքը, այնպիսին, որպիսին որ ներկայումս բռնել են «իսկական ռուս մարդիկ» և «հոկտեմբերեաններ»։

«Այդ պատճառով»,—շարունակում է լրագիրը,—նրանց տարած յաղթանակը ընտրութիւններին չը պէտք է համարել հարուած Լեհաստանի պրօգրեսսի և դեմօկրատիզմի համար։ Ընդհակառակը, ոչ մի բան այնքան չը կարողացաւ բանալ ազգային-դեմօկրատների իսկական պատկերը, որքան որ նրանց ղեկավարող դերը Դումայում, և ոչ մի բան չէ կարող այնքան շուտով ոչնչացնել այդ կուսակցութեան ազդեցութիւնը, որքան որ նրանց գործունէութեան շարունակելը նախկին ոգով»։

ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

«Մշակի» երեկվայ 233 համարում Լ. Սարգսեան իր «Կեղծիքներ» յօդուածի մէջ ասում է հետևեալը.

> Դեմօկրատական «Մշակը» միակ օրգանն էր մեզանում, որ դեռ բարեացակամ վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի Դաշնակցութիւնը, մանաւանդ նրա կատարած ինքնապաշտպանողական դերը։ Մի բան, որի մէջ ես համակարծիք չեմ եղել «Մշակին», ինչպէս և առհասարակ Դաշնակցութեան, նկատմամբ նրա դուալիզմը. ես համարում եմ այդ ընկերութիւնը անդարման չարիք։

Այո, մեր տեսակէտները տարբեր են այդ կէտում։

Մենք էլ, Սարգսեանն էլ մաքառում ենք Դաշնակցութեան դէմ և կամենում ենք մաքրել մեր հասարակական և ժողովրդական կեանքը այն սարսափելի ցաւից, որ մաշում է և կրծում մեր ժողովրդի սիրտը։

Սակայն տարբեր են մեր գործողութիւնների շարժառիթները և ձևակերպութիւնները։

Լ. Սարգսեանի համար արդէն բոլորովին վճռված հարց է, որ դաշնակցութիւնը դարձել է մի չարիք, որը բարեփոխվել չէ կարող և ուրեմն բոլորովին պէտք է վերացվի ասպարէզից։

Իսկ մենք նայում ենք Դաշնակցութեան վրա, իբրև մի շատ լուրջ հիւանդի վրա, որին պէտք է փորձել բժշկել։ Դաշնակցութեան հետ կապված են մի քանի հասարակական հոսանքներ, որոնք իրանց ույժը դեռ պահպանում են կեանքի մէջ։ Այդ հոսանքները պահանջ ունեն արտայայտութեան և ներկայացուցչութեան, որոնց համար պէտք է ծառայէ կամ բարեփոխված և մաքրված Դաշնակցութիւնը, կամ մի նոր համախմբում, մի նոր կազմակերպութիւն։ Եւ ահա մենք մեր յոյսը դեռ չենք կտրում և սպասում ենք, որ դաշնակցական բազմութեան մէջ հանդէս կը գան թարմացնող ույժեր, ներքի բարեշրջումի հերոսներ, որոնք համարձակ ձեռքով դէն կը շպրտեն բոլոր սև ու ապականող նիւթերը և կը տան նրան գաղափարական հարազատութիւն և գործնական մաքրութիւն։

Գուցէ մենք սխալվում ենք. բայց մենք ցանկանում ենք այն բժշկի դերը կատարել, որը ամեն կերպ աշխատում է հիւանդին բժշկել և ձեռք չէ վերցնում նրանից մինչև փորձած չը լինի իր բոլոր դեղերը և միջոցները։

Ճիշտ է, սոսկալի և սարսափելի են այն փաստերը, որ տալիս է մեր իրականութիւնը, բայց և այնպէս պէտք է աշխատել մաքրել Աւգեան ախոռները։ Գաւառի ամեն մի անկիւն բերում է մեզ ամեն օր ժողովրդական արտասուքի, հառաչանքի և հեծեծանքի սրտամաշ արձագանքները։ Մեր առաջ կանգնած են հարստահարված ու կեղեքված գիւղացիներ, որբացած ընտանիքներ, անպատուութեան ենթարկված կանայք, ստրկութեան մատնված հարազատներ։ Նրանց աղիողորմ ձայները մեզ կանչում են օգնելու ժողովրդին։ Եւ մենք արտայայտող դարձանք այդ ձայների։

Մենք արտայայտեցինք և բարեկամական խորհրդի, և բողոքի, և գանգատի ձայնով։

Առաջներ չէին ուզում լսել, մեզ զրպարտող և չարակամ էին հրատարակում, իսկ յետոյ սկսեցին թշնամի և մատնիչ կոչել, փորձեցին մեր ձայնը կտրեցնել և մեր բողոքները թաղել հողի տակ։

Բայց հասարակութեան բողոքը, ժողովրդական վիշտը չէր կարող թաղվել և նա հրամայողաբար պահանջում էր բացատրութիւն տալ անթիւ դէպքերի առիթով։

Պէտք է պատասխանէին, պէտք է բացատրութիւններ տային։ Եւ վերջապէս բարբառեցին։

—Դրանք բացառութիւններ են, ասացին նրանք, մասնաւոր դէպքեր են, կողմնակի չեղումներ բուն գործունէութիւնից։

Ճիշտ է, մեզ չէ բաւականացնում այդ պատասխանը և մենք լաւ տեսնում ենք, որ «բացառութիւններ» կոչվածները այնքան բազմաթիւ են, այնքան միօրինակ զանազան տեղերում, որ նրանք հանդիսանում են իբրև արդիւնք միատեսակ դրդումների և պատճառների, բայց և այնպէս մենք չենք կարող դեռ մի շարք լուրջ փորձեր չանել լսեցնելու գործողներին, որ նրանց շուրջը կատարվում է մի սարսափելի ողբերգութիւն, որը անտես անել չէ կարելի ոչ մի կերպ։

Մենք հրաւիրում ենք մարդկանց ըսթափվել, յուսալով որ կը սթափվեն։ Մենք կոչ ենք անում մաքրել շարքերը, յուսալով, որ կը մաքրեն։ Մենք համոզված ենք ինքնաքննութիւն կատարել և բիւրեղանալ, յուսալով, որ կը վարվեն այսպէս։

Լ. Սարգսեան համարում է այդ հրաւէրները, կոչերը, համոզումները ապարդիւն և առաջուց դատապարտված անաջողութեան. բայց մենք այնուամենայնիւ կը շարունակենք անել այդ բոլորը և ձեռք կը լուանանք միայն այն ժամանակ, երբ յոյսի ոչ մի նշոյլ այլ ևս չի մնայ մեզ մօտ։

Մենք կասենք նրանց ղեկավարներին, որ նրանք իրանց անընդունակութեամբ և ապիկարութեամբ թաղում են գործերը և խայտառակում դրօշակները, մենք կասենք, որ նրանք ժողովրդի ազատութիւնը դարձրել են ժողովրդի ստրկութիւն, մենք կասենք որ աշխատաւորների դատը նրանք դարձրել են խուժան պատրաստելու մի գործօն, որ նրանք արհեստակցական միութիւնները դարձրել են արհեստակցական դաւադրութիւններ, մենք կասենք, որ ժողովրդական ազատ քուէն և կամքը նրանք դարձրել են կապալի առարկայ, մենք կասենք, որ գրական խօսքը, նրանք ոտի տակ են տուել և ցեխոտել այնպէս, ինչպէս նա երբեք չէ եղած։

Այդ բոլորը կասենք և որքան էլ մեծ թուան խոչընդոտները և յանդուգն՝ սպառնալիքները, այնուամենայնիւ յոյսներս չենք կորցնի հիւանդին բժշկելու։

Իսկ եթէ նա չի բժշկվի և կը գնայ իր կործանման ճանապարհով, մենք գոնէ մի տխուր մխիթարութիւն կունենանք, որ մենք մեր կողմից արինք այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ էր թշուառ ելքը վերացնելու համար։

Ա. Քալանթար

ՋՈՒՐ ՏԵՂ ՄԽԻԹԱՐՈՒՄ ԷՔ ՁԵԶ

«Երկրի» բութ Սլաքներից մինը իր դաղված սրտին մխիթարութիւն գտնելու համար հնարել է մի պոչաւոր սուտ։ Բութ Սլաքը, թէև իրան շատ փորձված է կամենում ցոյց տալ խուզարկութեան արհեստի մէջ, բայց այս անգամ վատ խուզարկու (сыщикъ) է հանդիսացել։ Մի կողմ թողնենք այն, որ Սլաքի պէս մարդիկ յանդգնում են բարոյականութեան, գրական էթիկայի, պատուի գաղափարի մասին խօսել. այդ միայն ծիծաղ կարող է յարուցանել և հէնց «Սլաքը» «Երկրի» № 21-ում տպված իր ափեղ-ցփեղ յօդուածով իր կատարեալ անբարոյականութեան փառաւոր ապացոյցն է տալիս, հնարելով պոչաւոր սուտեր, երկրայինների դաղված, մորմոքված սրտերին մի քիչ սպեղանի քսելու համար, թէ իբր «Մշակի» բաժանորդները յետ են դարձնում «Մշակի» համարները, իբր պօստը ամեն օր յետ է բերում համարները։ Եւ այդ իր ուղեղի խելապատակի մէջ միայն գոյութիւն ունեցող սուտը հալած իւղի տեղ ընդունելով, նա արդէն մխիթարական է գտնում այդ երևոյթը։

Ողորմելի ինքնախաբէութիւն, ողորմելի տախսու Սլաք! Որքան ցաւում եմ, որ այդ մխիթարութիւնը նրան տալ չեմ կարող։ Խեղճը գոնէ մի օր, մի ժամ կը սփոփվէր։

Ոչ, տախսու Սլաք. զուր են ձեր յոյսերը։ «Մշակի» բաժանորդները շարունակում են ստանալ իրանց համարները։ Եւ եթէ մենք ասէինք, թէ «Երկրի» խմբագրատանը «Երկրի» համարները «աշնան տերևների պէս թափվում են նրա վարիչների գլխին, որ պօստի ցրուիչները տոպրակով յետ են բերում «Երկիրը», որ լրագրավաճառների մօտ «Երկիր» չէ ծախվում, գուցէ, պ. Սլաք, աւելի մօտ կանգնած լինէինք ճշմարտութեան։ Թշուառականներ, այն ինչ որ ձեզ է պատահել, ուրիշներին էք վերագրում։ Ոչ, իմացէք ձեզ համար դառն ճշմարտութիւնը.—մինչև այսօր միայն երկու մարդ, երևի Սլաքի խելքի տէր մարդ վերադարձրել են մեզ «Մշակը»։ Եւ կեղտոտ Սլաքների աղտոտ գրչիկները որքան էլ լկտութեամբ ստախօսեն, «Մշակը» միշտ կը մնայ նոյն «Մշակը», ինչ որ եղել է 35 տարի և գուցէ մի քանի կեղտոտ սլաքականներ «Մշակը» վերադարձնեն յատկապէս իրանց դաղված սրտին մի փոքր սպեղանի քսելու համար։

Այո, ընթերցող հասարակութիւնը, հայ ժողովուրդը ըմբռնել է, որ նրա միակ մաքրողը կեղտոտ Սլաքների աղտեղութիւններից «Մշակն» է և կը լինի։

Ձեր մարդկանց գաղտնի շրջաբերականները՝ «Մշակին» բոյկոտ յայտարարելու (պատրաստ ենք ապացուցանել վկայութեամբ) չօգնեցին. այժմ ինքներդ էք կամենում թելադրել, հնարել սուտեր։ Մի ժամանակ նոյնը արեց և «Մեղուն». բայց ոչինչ չօգնեց։ Այժմ ձեր պրովօկացիան էլ չի օգնի։

Հ. Ա.

ՄԱՄՈՒԼ

Էջմիածնի համագումարը շարունակում է զբաղեցնել արտասահմանեան հայ մամուլը։ Այդ մամուլը, նոյնիսկ դաշնակցական մամուլը, գրեթէ ամբողջովին պախարակում է կովկասեան դաշնակցականների բռնած դիրքը և վարմունքը։

«Հոչնակ» թերթը գրում է.

«Նախորդ թուով բրած մեր խոստման համաձայն կուզանք արևմտեան հայերէնով ներկայացնել պ. Հ. Առաքելեանի ամփոփումը այն գաղափարներուն՝ զոր կովկասահայոց եկեղեցական-ազգային բոլոր գործերը անօրինելու նպատակաւ Էջմիածին համախմբուած պատգամաւորներէն ոմանք արտայայտեցին Կենտրոնական ժողովին մէջ։ Անոր մանաւանդ շահեկան են այս գաղափարներ և ցոյց կուտան թէ ընկերական ծանրակշիռ հարցերու մասին ինչպիսի մոլոր ու կործանարար նախապաշարումներով կը կաշկանդուին բոլոր անոնք որ գիտական ու ընկերաբանական մակերեսային վեր ի վերոյ ծանօթութիւններ սոսկ առացած են երկրորդական աղբիւրներէ։ Եւ այսպիսներու իրաւասութեանը ենթարկել ազգի մը կենսական պաշտօնավարութիւնները, ազգային կեանքը քանդել պիտի ըլլայ պարզապէս։

Ժողովին ներկայ նոր դաշնակցականները, այսինքն, անոնք, որ կը ձգտին ոչնչացնել Դաշնակցութեան որևէ ազգային բնաւորութիւնը և դարձնել զայն ընկերվարական կամ, աւելի ճիշտը, ընկերվարական յեղափոխական կուսակցութիւն մը, իրենց ճառերու մէջ կաշխատէին այն միտքը առաջ բերել, թէ իրենք կոչուած են։ և ժողովուրդը, մանաւանդ ժողովուրդի աշխատաւոր զանգուածը, յանձնարարեր է իրենց քանդել, ոչնչացնել եկեղեցին, կրօնը, խզել եկեղեցւոյ և ժողովրդի կապերը, արտաքսել հոգևորականութիւնը, խզել անոր հետ որևէ յարաբերութիւն, խլել վանքական-եկեղեցական բոլոր հողերը կալուածները, համայնացնել զանոնք և տալ իբրև սեփականութիւն այն գիւղացիութեան, որ կապրի այդ հողերու վրայ, ըլլան անոնք հայ, թուրք թէ ռուս անխտիր, հրատարակել, որ ազգային-եկեղեցական վանքական այն կալուածները և հողերն ալ, որոնք կը գտնուին արտասահմանեան հայութեան մէջ, օրինակ Երուսաղէմի, Սսի, Եգիպտոսի հողերը և կալուածները, արդարութեան տեսակէտէն, պէտք է նոյնպէս խլուին վանքերու ձեռքէն, համայնացուին յօգուտ այն թուրք, արաբ գիւղացիներու, որոնք կօգտուին այժմ այդ հողերով։ Ապա այս պատգամաւորները կարտայայտէին այն միտքը, թէ պէտք է կրօնագիտութիւնը վտարել դպրոցներէն և կրօնի տեղ աւանդել բարոյախօսութիւն, թէ պէտք է վերցնել բոլոր տուրքերը և սահմանել եկամտային յառաջխաղաց տուրք, թէ ուսումը այն տեղերու հայոց ծխական կամ համայնական դպրոցներու մէջ, ուր ժողովուրդը հայախօս չէ, այլ վրացախօս կամ թրքախօս է, պէտք է աւանդել վրացերէն կամ թուրքերէն, ժողովուրդը նոր կրօն 'մը ստեղծէ իրեն համար, թէ եկեղեցին մեռած է ու ժողովուրդը կը ձգտի բոլորովին անջատուիլ անկէ, խզել իր կապերը։ Այս «ծայրայեղ արմատականներու» թուոյն մէջ կը գտնուէին նաև հոգևորականներ, օրինակ Արսէն վ. Ղլտճեան, կամ Տաճատ վարդապետ, որոնք կատաղաբար կը յարձակէին հոգևորականութեան և կրօնի ու եկեղեցւոյ նուիրապետութեան վրայ, ըսելով թէ եկեղեցին փտած մարմին է. անպէտք, անբարոյական, թէ ամեն բան պէտք է խլել անկէ, տալ ժողովուրդին ձեռքը, մոռնալով կամ մոռնալ կեղծելով, որ եթէ անկեղծ են իրենց համոզմունքի մէջ, պէտք է անմիջապէս ձգեն իրենց փարաջան, դուրս գան հոգևորականութենէ և չապրին ժողովուրդին հաշուով։

Ի հարկէ, ժողովին մէջ կային անձեր, նոյն իսկ դաշնակցականներէն, որոնք այդ գիտակից և անգիտակից ծայրայեղներուն կապարկէին թէ անհնարին է մի գրչի ծայրով տապալել 1900 տարի գոյութիւն ունեցող մի հաստատութիւն, որուն հետ սերտ կապերով շաղկապուած, զանգուած է եղեր ազգին ամբողջ հոգեոր-մտաւոր-բարոյական կեանքը, թէ օրէնքներ, արմատական օրէնքներ գրելը դժուար բան չէ, բայց այդ օրէնքները կեանքի մէջ մտցնելու, գործադրելու մենք ոչ մի հնարաւորութիւն չունինք. թէ կայ պետական օրէնք և մինչև այդ օրէնքը չը փոխուի անհնարին է որևէ փոփոխութիւն մտցնել, թէ մենք ունինք և անկապտելի իրաւունքներ-շահեր, զորս ոտնակոխ ընելու ոչ մի իրաւունք չունինք. թէ այդ հողերը, որ իրենք զիրենք «սօցիալիստ» կոչող դաշնակցական պատգամաւորները այնպէս մեծահոգութեամբ և առատութեամբ կուզեն բաշխել թէ թուրքին, թէ արաբին, թէ եգիպտացիին, ընդհանուր ազգի սեփականութիւն են. թէ վաղաժամ է խզել եկեղեցիի և ժողովրդի կապերը, թէ նոյն իսկ Եւրոպայի շատ քաղաքակիրթ երկիրներու մէջ մինչև այսօր չեն վստահիր կրօնագիտութիւնը վերցնել, թէ ժողովուրդին, մանաւանդ մեր հայ ժողովուրդին համար որ դեռ չունի նոյն իսկ կրօնական մաքուր հասկացողութիւն, այլ ընկղմած է նոյն իսկ ֆետիշիզմի մէջ, կրօնը պահանջ է. թէ դժուար թէ հայ ժողովուրդը որևիցէ պատգամաւորի յանձնարարութիւն տուած լինի թէ գնացէք տապալեցէք Էջմիածինը, հայ եկեղեցին, թէ վերջապէս այդ բոլոր ցանկութիւնները, իղձերը իրագործելու միջոց և հնարաւորութիւն չունինք։

Արդարութիւնը կը ստիպէ խոստովանիլ թէ հին, խոհեմ և իսկական դաշնակցականները, շատ լաւ կը զգային ներկաւ քարոզած մտքերու եթէ ոչ անհեթեթութիւնը գոնէ չափազանցութիւնը. կը զգային թէ անոնք սոսկալի կերպով կը մեղանչեն ազգի պատմութեան ու անոր գերագոյն շահերուն, թէ անոնց ծրագիրը ներկայ քաղաքական պայմաններու և ժողովրդի այժմեան վիճակին մէջ բացի աղէտալի վնասէ ոչ մի օգուտ չէ կարող բերել. կը զգային թէ այդ մարդիկ իրենց տգիտութեամբ, վեր ի վերոյ մակերեւութային ուսումնասիրութեամբ անծանօթութեամբ անցեալին, պատմութեան, գրականութեան, հոգեբանութեան ու պիտոյից հետ՝ անկարող ու անձեռնհաս են լուծելու այդպիսի կենսական հարցեր. կը զգային թէ այժմ դեռ խօսք չէ կարող լինել եկեղեցիի ու ժողովրդի անջատման, այլ միայն եկեղեցիի բարեկարգութեան մասին. թէ այժմ մենք աւելի շատ տկարոտ, խոցոտ ցաւեր ունինք բժշկելու, աւելի մեծ վէրեր ունինք դարմանելու. թէ վերջապէս առաջարկուած ծրագիրը կարող է սոսկալի պառակտում առաջ բերել ազգի ամբողջութեան մէջ և նոյն իսկ Ռուս բիւրոկրատիայի ձեռաց մէջ լաւ զէնք դառնալ հայոց ազգային շահերուն դէմ»։

*

Բժ. Ալ. Խատիսեանը նորից փորձ է անում մոլորեցնել ռուս հասարակութիւնը իր պատասխանով, որ տպել է «Тифлисская Рѣчь» նոր լոյս տեսնող լրագրի № 1-ում։ Այդ յօդուածի մէջ նա աշխատում է հերքել պ. պ. Յ. Ս.-ի, Կարա-Մուրզայի և «Մշակի» արտայայտած կարծիքները իր նախորդ յօդուածի մասին և այնպէս է ցոյց տալիս, որ իբր «Մշակը» անզօր չարութեամբ կամենում է անձնական վիրաւորանք հասցնել իրան։ Շատ սխալվում էք պ. Խատիսեան. «Մշակը» կամեցել է ձեզ միայն մի խրատ տալ, հասկացնել, վերջապէս, որ անկարելի է միաժամանակ երեք-չորս աթոռների վրայ նստել և ամեն մի գործում դառնալ Դաշնակցութեան ներբողաբան։ Դուք աշխատեցիք կուսակցական նպատակներով և դաշնակցական ջրերին ջուր լցնելու միտումով ոտնակոխ անել իրաւունքը և ճշմարտութիւնը։ Ձեր ոչ մի լարախաղացական հնարաւորութիւնները չեն կարող հերքել այն անյայտնի փաստը, որ Յովնանեան դպրոցի գործում մի վրդովեցուցիչ անարդարութիւն և անիրաւութիւն է գործված և 7 իրաւագէտները տուել են իրանց որոշումը ոչ թէ իրաւունքի չոր, անհոգի հասկացողութեան մեկնաբանութիւնից թելադրված, այլ արդարութեան և իրաւունքի գերագոյն շահերի թելադրութեամբ։

*

Պարիզում հրատարակվող «Անահիտ» ամսագրի խմբագիր պ. Չօպանեանը Էջմիածնի ժողովի մասին հետևեալ կարծիքն է յայտնում (թիւ 8—9), որ մենք առաջ ենք բերում, չը համաձայնելով սակայն մի քանի ձևակերպութիւնների հետ.

«Կեդրոնական ժողովը արդէն սկսած է իր նիստերն Էջմիածնայ մէջ։ Ոչինչ կարելի է երևակայել աւելի կատակերգական և աւելի տգեղ։ Պատգամաւորներուն 9/10 ը դաշնակցական են. ուրեմն դաշնակցական ժողով է այս, և ոչ ազգային։ Եթէ դաշնակցականները կուզէին ժողով մը ընել ռուսահայոց հանրային հարցերու վարչութեան մէջ իրենց մասնակցութեան ուղեգիծը պատրաստելու համար, այդ իրենց իրաւունքն էր. բայց ատոր համար պէտք չը կար Էջմիածին երթալու։ Այս ժողովը կուզէ «ազգային» հանգամանք տալ իրեն, և «կուսակցական» է. իր վճիռները չեն կրնար ամբողջ ազգին, նոյն իսկ ամբողջ ռուսահայոց համար հեղինակութիւն կազմել։ Ինչ որ ամենէն տգեղն է այդ դէպքին մէջ, տեսնելն է այդ բոլոր անհաւատ, կրօնատեաց, սօցիալիստ պարոնները որ կերթան հայ հաւատացեալներուն սրբավայրին մէջ՝ հայ եկեղեցին դէմ հայհոյել, հայ կղերը նախատել և իրաւազրկել։ «Ալիք»-ի խմբագիրներէն շատ առաջ՝ ես դադրած եմ կրօնական դոգմերուն հաւատալէ. ոչ մէկ կրօնք ունիմ բացի գեղեցկութեան կրօնքէն. բայց և երբէք չեմ դադրած գնահատել «բանաստեղծութիւնը կրօնական յղացումներուն, և երբէք իմաստակութիւնը չեմ կրնար ունենալ մարդ մը ֆնատակար նկատելու՝ պարզապէս որովհետև կրօնական է։ Չեմ հանդուրժեր որ կղերը բռնապետօրէն տիրապետէ ազգի մը հանրային կեանքին մէջ, բայց և մեր մէջ՝ չեմ տեսած որ հայ կղերը ժողովրդին վրայ ճնշող ազդեցութիւն մը ունենայ. մեր մէջ՝ կղերը, այժմ, ժողովրդէն կախում ունի, չի տիրեր ժողովրդին վրայ։ Կըմբռնեմ որ ռուսահայ հասարակութիւնը ձգտի կալուածներու մատակարարութիւնը, դպրոցներու վարչութիւնը միմիայն կղերին ձեռքը չը թողուլ, բայց չեմ հասկնար որ այդ բոլորն ամբողջապէս ուզէ խլել կղերին ձեռքէն՝ այնպիսի բոպէին մը, երբ իրաւաբանօրէն անոնք հայ Եկեղեցւոյ (այսինքն ամբողջ Հայութեան՝ կղերական և աշխարհական) կը պատկանին և ոչ լոկ՝ աշխարհական հայութեան (այս բոլորը Պ. Սամսոն Յարութիւնեան շատ լաւ բացատրած է իր ճառին մէջ)։ Ամէն պարագայի մէջ, ես անկարող պիտի զգայի զիս՝ կղերին տանը մէջ երթալ կղերը քարկոծելու. այնպիսի կոպտութիւն մը կայ այդ ընթացքին մէջ, որ կայզիմ թէ ինչպէս Ահարոնեանի պէս զգայուն գրագէտ մը չէ նկատած զայն։ Արդէն՝ ամբողջ այս վերջին տարուան մէջ Ահարոնեանի դիրքն ինծի անհասկանալի կը թուի. Ահարոնեան այն գրագէտն է, որ մենք կը սիրենք, որովհետև զգացած՝ այս ներկայ եղերական շրջանին մէջ՝ հայուն ցաւը երգել սքանչելապէս.—Հայուն ցաւը, ամբողջ հայութեան, և ոչ թէ հայ բանուորին միայն։ Իր խառնուածքը, իր գրականութիւնը, իր զգայնութիւնը ոչ մէկ կապ ունին ընկերվարականութեան հետ. Աբովեանի, Նալբանդեանի, Րաֆֆիի շարունակողն է ինքը, «ազգասէր» գրագէտն է. Ինչպէս կը հանդուրժէ որ իր անունով հրատարակուած թերթ մը ազգային դատը տանի թաղել ընկերվարականութեան մէջ. Ինչպէս յանձն կառնէ մեղսակցիլ այդ խառնափնթոր ու երկակենցաղ գործունէութեան։ Շատ ցաւալի կը գտնեմ որ կրցած չըլլայ նա զսպել իր ընկերները այս սխալ քայլէն։ Շատ ցաւալի է մանաւանդ, որ իր ընկերները չարաչար գործածելով Հայրիկին ժողովրդասիրութիւնը և պատուաւորութիւնը, անոր տուած կոնդակին հանդէպ ցոյց տուած ըլլան այդքան տմարդի ընթացք, որ նոյն ինքն Հայրիկը նեղ ու սխալ դրութեան մը մէջ կը դնէ։

Դառնալով Դաշնակցութեան, ցոյց տալու համար թէ իր բռնած դիրքը որքան հակասական է նոյն իսկ իր երէկուան գործունէութեան հետ, պիտի յիշեմ որ երկու տարի առաջ, Եւրոպայի վեհապետներուն հայոց հարցը ներկայացնելու համար՝ Դաշնակցութիւնը պատգամաւոր ընտրեց երկու եկեղեցականի, ու հիմա մինչ նոյն Դաշնակցութիւնն է որ կուզէ ազգային գործունէութենէն բոլորովին վտարել եկեղեցականները... Դաշնակցութեան կովկասեան վարիչները հաւասարակշռութիւննին կորսընցուցած կը թուին՝ իրենց ձեռք ձգած մեծ զօրութենէն գինովցած. իրենց ձգտումն է ռուս յեղափոխականներուն քով աւելի յառաջացեալ և պատուաւոր երևալ. մնացած խնդիր. բայց մեր ողորմելի ազգին անհատ վիճակին հանդէպ՝ այդ sport-ը առնուազն անհնարին է։ Կը կրկնեմ ինչ որ ըսի անցեալ յօդուածովս. կամ Դաշնակցութիւնը պէտք է դառնայ զուտ ազգասիրական մարմին մը, կամ պէտք է յայտնապէս ընկերվարական կուսակցութիւն հռչակէ ինքզինքը և ձեռք քաշէ ազգային հարցէն։ Դաշնակցութեան վարիչները պէտք է վերջապէս ըմբռնեն թէ ընկերվարականութիւնը ոչ միայն կապ չունի Հայոց ազգային դատին հետ, այլ կը վնասէ անոր»։

*

«Մշակի» և «Երկրի» մէջ մղվող բանակռուի առիթով ևս տեղական և արտասահմանեան մամուլը իր կարծիքն է յայտնում։

«Աշխատանք» շաբաթաթերթը իր վերջին (№ 37) համարում երկու յօդուած է տպել։ Առաջ ենք բերում երկուսն էլ. առաջինը կրում է «Երէկ և այսօր», իսկ երկրորդը «Ի՞նչ արժէք ունեն ստորագրութիւնները» վերնագիրը։

Գրական մի վակխանալիա...
Ծերուն սատած անարխիա...

Ա՛ռ ձեռք հայ թերթերը. կարդա և եթէ երկու բողէից ձեռքդ վայր չգցես, ուրեմն դու էլ պարոն, անարխիստ ես, գրչի անարխիստ, այդ բառի ամենածայր մտքով...

«Մշակից» հեռանում է Ա.-Դօն, «Մշակին» թողնում է նա ինքը պ. Լևոն Բաղալեանը, աւելացրէք այդ երկու անունների վրայ մեր սիրելի, յարգելի Լէօի անունը... այդ այսօր։ Իսկ երէկ։

Երէկ հեռացաւ պ. Յ. Յովհաննիսեանը, նրանից յետոյ թողից Թովչեան, Եղիշէ Թոփչեանը, իսկ աւելի ուշ՝ մի ուժ ևս ամրս մնացողից առաջ և Խաժակը... Գարեգին Խաժակը...

Ի՞նչ է պատահել...

«Մշակը», ասում են դրանք, խունկաբանացել է, փչացել։

Իսկ տամ՝ երբ դուք այնտեղ գրում էիք, մեզ խելք սովորեցնում, առաջ ինչ էր «Մշակը»։

Առաջ նա լաւ էր, այն չէր ինչ որ այսօր.

—Ինչու։

Որովհետև այնտեղ մենք էինք։

—Իսկ Քալանթարն այնտեղ էր։

Այո։

—Իսկ Համբարձում Առաքելեանը։

Նա էլ այնտեղ էր.

—Իսկ Մարկոսեանը։

Մարկոսեանն էլ կար։

—Եւ դուք դրանց այդ Քալանթարի, Մարկոսեանի, Առաքելեանի հետ տասնեակ տարի գրել էք նոյն թերթում, ասել, խօսել, ծիծաղել 'ք դրանց հետ, և նոյն Մշակի միջոցաւ հասարակութիւնը ղեկավարել էք։

Նրանց հետ ընտրել և ընտրուել էք. իմանալով, որ նրանք դատարկութիւններ են, ֆրազեօրներ են, վախկոտ են, շահադիտողներ են... Նրանց հետ թևանցուկ անցել էք. Նրանց հետ ունեցած ձեր ծանօթութիւնը շահագործել էք, պաշտօններ ստացել, միջնորդութիւնը ընդունել, խնդրել։ Եւ այսօր հրապարակ էք գալիս և ասում...

—Դրանք միշտ էլ այդպէս էին, միշտ էլ պատեհներ, ֆրազեօր, վախկոտներ...

Իսկ դուք ինչ գործ ունէիք դրանց հետ։ Մի թէ դուք ապրում էիք դրանց սուրի տակ և գիտակցաբար թոյլ էիք տալիս, որ դրանք ձեզ շահագործեն... և լռում էիք...

Այո, երեկ լռում էին, ամեն ինչ տանում էին, համբերում էին, ընտրում էին, համաձայնում էին, դասած տեղերը բռնում էին...

Իսկ այսօր...

—Այսօր մենք ունենք մեր թերթը, որը մեզ վճարում է, ունենք մեր կուսակցութիւնը, որը մեզ տեղ ու պաշտօններ է տալիս։ Լաւ տեղեր, լաւ պաշտօններ, լաւ ռոճիկներով։

Ասացէք խնդրեմ «ընկերներ», Երբ էիք դուք անկեղծ, առաջ թէ այժմ...

Ո՛չ առաջ և ո՛չ այժմ...

Ո՛չ երէկ և ո՛չ այսօր։

Իսկ ես կաւելացնեմ և ոչ վաղը...

Ո՛, շատ շատ բաներ կասէի, բայց այսօրուայ համար այսքանն էլ բաւական է...»

—

«Երկիրը». «Յառաջ», «Ալիք», «Ջանք» այդ հարազատ ընկերն ու դաշնակիցը իր առաջին համարից մինչև առաջիս դրած 14-երորդ համարը սկսել է «Մշակի» դէմ մի արշաւանք թէ զանազան «նամակ խմբագրութիւններով» և թէ յատկապէս «Մշակի» ուղղուած յօդուածներով։

Մամուլը որպէս հասարակական կարծիքի բերան որոշ հարցերի վերաբերմամբ բացում է իր էջերը և տեղ տալիս այս կամ այն անձանց և խմբերի կարծիքներին։ Այդպէս է անում ազատ, շիտակ և անաչառ մամուլը։

Նա, ցանկանալով իմանալ հասարակական կարծիքը, բացում է իր էջերը և առանց խտրութեան բոլորի առաջ տալում է զանազան կարծիքներ թէ թեր և թէ դէմ։

Այժմ մի համեստ հարց տանք «Երկրին». Տեղ կը տա՞յ արդեօք նա իր էջերի մէջ այնպիսի կարծիքների, որոնք ուղղուած լինեն Դաշնակցութեան դէմ, թէ նա տեղ է տալիս միայն այնպիսի բաց ու փակ նամակներին, որոնք մեղադրում են միայն «Մշակին» կամ նրանց, որոնք համակրելէ չեն «Երկրի» կամ Դաշնակցութեան հետ։

Եթէ «Երկիրը» այս վերջին միջոցին է դիմում և ճգնում, [illegible] է զգում այն բոլոր կարծիքներ՝ որոնք իրա դէմ են—ուրեմն նա հասարակական կարծիքի բերան չէ, այլ մի կուսակցութեան—հետևապէս և նրա մէջ տպած բոլոր նամակ խմբագրականները, եթէ նոյն իսկ կրէին 10,000 ստորագրութիւններ, ոչ մի ոտնաչափ արժէք չունին, որովհետև կարելի է ժողովել 11000 ստորագրութիւններ նոյն «Երկրի» և Դաշնակցութեան դէմ։

Ասացէք խնդրեմ, ինչ միջոցաւ մենք կը իմանայինք հասարակութեան տրամադրութիւնը, եթէ այսօր հրապարակի վրայ լինէր միայն «Երկիրը», որը կոչ չացնէր ամեն մի նամակ, եթէ նոյն իսկ նրա տակը լինէր հայ ժողովրդի 9/10-որդի ստորագրութիւնը, և ընդհակառակը տեղ կտար այն մի քանի տասնեակ մարդկանց գրութիւններին, որոնք պատկանում են նրա բանակին։

«Մշակը» այդ կողմից անհամեմատ բարձր է կանգնած «Երկրից», որովհետև նրա էջերում մենք պատահել ենք գրութիւններ, որոնց հետ խմբագրութիւնը համաձայն չէ եղել, իսկ «Երկրի» մէջ երբէք չէք պատահի այդպիսի բանի։ Ահա թէ ինչու «Երկրի» էջերում տպած բոլոր նամակները, ուղղուած «Մշակի» դէմ, կորցնում են իրենց իրական արժէքը։

«Երկիրը» հասարակական կարծիքի թարգման չէ կարող լինել, որպէս և աշխատաւոր մասսաների կարծիքի։ Իր միակողմանիութեամբ—նա ոտնատակ է տալիս անաչառութիւնը, ուրեմն և ճշմարտութիւնը։

Ահա իմ կարծիքը այն բանակռուի մասին, որ վերջերս ծագում են միմեանց դէմ ստորագրութիւնների միջոցաւ «Երկրին» ու «Մշակը»։

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

I

Ես մի պարտք ունեմ կատարելու։

Ես պարտաւոր էի և մեծ պահանջ էի զգում մի քանի խօսք ասել այն վաղամեռիկ երիտասարդ ուսանողի՝ Տէր-Մկրտչեանի մասին, որ գնդակահար եղաւ Կրօնշտադտում զինուորական դատարանի վճռով։

Իր ժամանակին չը կատարելով պարտքս, ես սպասում էի յարմար առիթի։ Այդ առիթը ներկայանում է այսօր։ Ես կարդացի «Страна» լրագրի № 168-ում, որ Պետերբուրգում, երբ դատարանը քննում էր բանուորական պատգամաւորների խորհրդի գործը, տեղի ունեցաւ հետևեալ դէպքը.

«Երդուեալ հաւատարմատար Սօկոլով հարցրեց նախագահին՝ ինչու չէ ծանուցանվում մեղադրվող ուսանող Տէր-Մկրտչեանի դատարան չը գալու պատճառը։ Յայտնվեց, որ ուսանող Տէր-Մկրտչեանը դատարան չէ եկել, որովհետև գնդակահար է եղել Կրօնշտադտում. Այդ ժամանակ հասարակութիւնը և պաշտպանները, բոլոր մի մարդ, վեր կացան իրանց տեղերից և ոտքի կանգնելով յարգեցին հանգուցեալի յիշատակը»։

Ո՞վ էր յարգանքի արժանի այդ ուսանողը։

Մի շաբաթ առաջ ինձ մօտ մտաւ մի շուշէցի հայ չինօվնիկ, որին ես շատ լաւ ճանաչում էի Շուշուց իբրև մի վերին աստիճանի զուարճախօս և զուարթ մարդ և լաւ, պետական շահերին անձնուէր պաշտօնեայ։ Նրան տեսել էի մի ամիս առաջ այստեղ Թիֆլիսում և երբ այժմ տեսայ, ես գրեթէ չը կարողացայ ճանաչել նրան. այնքան նա փոխվել էր մի ամսուայ ընթացքում։

Թախիծ, աննկարագրելի վիշտ և թախիծ էր նկարված նրա տանջված դէմքի վրայ։ «Ինչ սոսկալի աղէտ է պատահել այս մարդին, զուարճախօս Մովսէս-բէկին»—մտածեցի ես։

Կարծես, նա դէմքիս վրա կարդաց իմ մտածմունքը և ինձ շուարանքի մէջ չը թողնելու համար. ասաց.

—Ես Կրօնշտադտում գնդակահար եղած Արամ Տէր Մկրտչեանի հայրն եմ։

—Թշուառ, բայց և երջանիկ հայր,—բացականչեցի ես,—դու կարող ես պարծենալ քո որդով, ինչպէս և հայ ուսանողութիւնը կարող է պարծենալ որ իր շարքերի մէջ ունեցել է նրա նման ընկեր։

Մովսէս-բէկը մեկնեց ինձ մի կտոր թուղթ, մատիտով գրած.

—Կարդացէք—ասաց նա։

Ես կարդացի։ Դա Արամ Տէր-Մկրտչեանցի գրած վերջին նամակն էր իր ծնողներին, եղբայրներին և քոյրերին Կրօնշտադտի բանտից, օգոստոսի 6-ին, այսինքն գնդակահար լինելու նախորդ գիշերը։ Բերում եմ բառ առ բառ այդ նամակը.

«Իմ թանկագիններ։ Պապա, մամա, Սօնիա, Շուշանիկ, Նիկոլայ, Գրիշա, Արմայիս, Աշոտ, Միքայէլ և Մելքսեդ.

«Գրում եմ ձեզ Կրօնշտադտի բանտից։ Ես կալանաւորվեցի «Կօնստանտին» ամրոցի վրա ապստամբութեան ժամանակ։ Վաղը ինձ կը դատէ զինուորական դատարանը. հաւատացած եմ, որ ինձ մահվան կը դատապարտեն։ Ձեզ համար ծանր կը լինի տանել ձեր թանկագին և ձեզ սիրող Արամի կորուստը. բայց թող ձեզ մխիթարէ այն հանգամանքը, որ ես տուի իմ կեանքս հայրենիքի ազատութեան մեծ և սուրբ գործի համար։ Ես կառավարութեան առաջին և վերջին զոհը չեմ։ Աշխատեցէք ինձ մոռանալ շուտով։ Համբուրում եմ ձեզ պինդ և պինդ։ Ձեզ սիրող Արամ»։

Որպիսի պարզութիւն և միևնոյն ժամանակ վեհութիւն։ Այդ քսան տարեկան հայ ուսանողը, լաւ իմանալով, համոզված լինելով որ մի քանի ժամից յետոյ պէտք է զրկվի իր ծաղիկ կեանքից, որ ժպտում էր նրան, որի հաճոյքները և քաղցրութիւնները նա դեռ չէր ճաշակել,—ոչ մի ափսոսանք, ոչ մի ցաւ չէ արտայայտում. Նա հպարտ է, նա պարծենում է, որ մեռնում է հայրենիքի ազատութեան սուրբ և վեհ գործի համար. Նա իր վարդագոյն արիւնով կամենում է ցօղել ազատութեան տանող ճանապարհը։

Եւ օրհնեալ լինի քո յիշատակը, ազնիւ, վեհ պատանի։ Գուցէ դու և սխալվում էիր քո արած քայլի հետևանքների մասին, բայց քո սխալը ազնիւ, մաքուր, գեղեցիկ սխալ էր։

Ես ցանկացայ Մովսէս-բէկից իմանալ գործի մանրամասնութիւնը։ Նա ինձ տուեց, պատասխանի փոխարէն, «Око» լրագրի մի համարը (№ 12), որտեղ տպված է հետևեալ յօդուածը.

«Ծերունի Տէր-Մկրտչեանը—մահվան պատժի ենթարկված ուսանող-էլէկտրոտեխնիկ Տէր-Մկրտչեանցի հայրը—պատմեց մեզ, որ Թիֆլիսում հեռագիր ստացաւ, թէ իր որդին ծանր հիւանդ է։ «Նոյն օրը ես թողայ Պետերբուրգ և միայն այստեղ իմացայ, որ նա Կրօնշտադտումն է, ձերբակալված և յանձնված զինուորական դատարանի, որ մահվան պատիժ է սպառնում։ Ես նրան չէի տեսել աշնանից ի վեր, ամբողջ տարի։ Առաջին իսկ շոգենաւով ես գնացի Կրօնշտադտ. օգոստոսի 4-ին ես այդտեղ էի և մինչև օգոստոսի 7-ը—որդուս գնդակահարման օրը—աշխատեցի որդուս հետ տեսակցութեան թոյլտուութիւն ստանալ։ Ժանդարմական վարչութեան մէջ ինձ ասացին, որ դժուար է տեսակցութիւն ստանալ և անհնար է, որովհետև որդիս մեծ յանցաւոր է։ Բայց ես, ծերունի հայրս, ինչ էի մեղաւոր։ Ամբողջ 25 տարիս նուիրելով պետական ծառայութեան, ես չեմ դաստիարակել որդուս մէջ ատելութիւն դէպի ռուսաց կառավարութիւնը, ես չը գիտէի, որ նա դարձել է յեղափոխական...։

«Բերդի կօմենդանտը չը կամեցաւ ինձ տեսնել. ես յանձնել տուի նրան անցագիրս ազնուական ծագումով և պատասխան ստացայ, թէ որդիս դատվում է զինուորական դատարանով և պէտք է դիմել զինուորական պրոկուրորին։ Մի ամբողջ թաղ հեռաւորութեամբ ինձ թոյլ չէին տալիս դատարանի տեղը։ Ես չը կարողացայ տեսնել ոչ դատարանի նախագահին, ոչ պրոկուրորին, ուր մնաց թէ խօսել նրա հետ։ Ինձ տեղ [illegible] աշխատեցին միջնորդել կօմենդանտի մօտ, բայց անօգուտ։ Մինչև իմ Կրօնշտադտ հասնելը այդտեղ բանտարկված էր և իմ երկրորդ որդին։ Վաղ առաւօտեան, [illegible], երբ իր աւագ եղբօրը պահապաններով տանում էին դատարան, Նա պոռաց. «Արամ, հայրիկը եկել է»։ Դրա համար կրտսեր որդիս ևս բանտարկվել էր։

«Ոչ մի տեղեկութիւն դատարանի ընթացքի մասին ստանալ չը կարողացայ։ Լրագիրներից իմացայ, որ օգոստոսի 7-ին նա մահվան պատժի է ենթարկվել։

«Այն ժամանակ ես գնացի ոստիկանապետի մօտ և այդտեղ ասացի ամեն բան, ինչ մտածում էի։ Ես ասացի, որ այդպէս ծիծաղել ծերունի հօր վրա մարդիկ չեն կարող։ Նրանք իրանք են ստեղծում յեղափոխութիւնը. ես գիտեմ այժմ, թէ ովքեր են գլխաւոր յեղափոխականները, գիտեմ, որովհետև ինձ—իր կեանքն ապրած ծերունուս—յեղափոխական դարձրին։ Եթէ երկրորդ որդիս ևս գնդակահար է եղել—թող ասեն...»

«Այդտեղ մի տարօրինակ բան պատահեց. ոստիկանապետը, խօսելով տելէֆօնով կօմենդանտի հետ, յայտնեց, որ կրտսեր որդիս իսկոյն կազատվի։

Եղան դիմողներ և պ. Ստոլիպինին։ Նրա մօտ եղաւ էլէկտրո-տեխնիքական ինստիտուտի վերատեսուչը. բայց ստացաւ պատասխան. «Յեղափոխականի համար ես ոչինչ չեմ անի։ Թող հայրը խնդիրք տայ Բարձրագոյն անունով»։ Բայց ինչպէս կարող էի խնդիրք տալ Բարձրագոյն անունով, երբ դատարանի վճռի և որդուս պատժի մասին ես իմացայ միայն լրագիրներից։

«Չը գիտեմ, գուցէ այս բոլորը երազ է. չը գիտեմ, որտեղ եմ ես այժմ, և ինչ է պատահում ինձ հետ։ Ծերունի մայրը վազում էր ետևիցս. նա ուզում էր ոտքով գալ այստեղ որդուն տեսնելու. այժմ ինչ պէտք ասեմ նրան»։

Նոյն հարցով ծերունի Մովսէս-բէկը դիմեց և ինձ. «Ի՞նչ անեմ, ինչ ասեմ մօրը»։

—Մխիթարեցէք,—ասացի ես,—նրանով, որ դուք ունեցաք այդպիսի մի հերոս որդի։ Մեծ է ձեր վիշտը, բայց նա պէտք է ամոքվէ յիշելով, որ ազատագրական շարժման մէջ ձեր որդին իր կեանքը զոհեց։

Շահրիար

ՄԻ ԿՏՈՐ ՉՈՐ ՀԱՑ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ

Մի աննկարագրելի թշուառ կացութիւն է ստեղծվել Ղազախ գաւառում։

Կարկուտն ու չորային, եղջերաւոր անասունների կոտորածը և եթէ սրանց վրայ էլ աւելացնենք ինքնապաշտպանութեան ծախսերը՝ պատկերը կատարեալ կը լինի։

Ամեն բան մոռացել ենք, հաց, մի կտոր չոր հաց ենք ուզում։

Սոսկալի էր անցեալը, սոսկալի է ներկան և սոսկալի՝ ապագան, այո ապագան աւելի սոսկալի, քանի որ աշնանացան չունինք, իսկ գարնանացանի համար խօսք անգամ լինել չի կարող, սերմ չունինք. ոչ էլ վար ու ցանք լծկան անասուն, չունենք տաւար։

Ղազախը իրաւունք ունի պահանջելու. Նա չէ մուրում, այլ պահանջում է, քանի որ արժանի է դրան. Նա հայ-թուրքական ընդհարումի ժամանակ ամենապատուաւորը դուրս եկաւ, կռւից մէկը 20-ի դէմ ցոյց տուեց, որ հայը [illegible] է բառիս ընդարձակ նշանակութեամբ, նա ջնջեց դարաւոր սխալ անարգ կարծիքը թէ՝ ты рабъ ты трусъ, ты армянинъ և դրա տեղը դրեց... ты храбръ, герой, ты армянинъ... Եկաք խնդրամատոյց եղաք Թիֆ. կենտ. նպաստամատոյց յանձնաժողովին, երեսի զոռով մի վագոն ցորեն ուղարկեց... Է՞հ սրանք ինչ անեն, ուզողը 100-է տուողը մէկը... որ մէկին տան... ինչու են սպասում մեր հարուստները, օգնել է պէտք, քանի ուշ չէ, ապա թէ ոչ դրանց գլխին կատարեալ ցաւ կը դառնանք.

Մի բան էլ։ Մեզ նախատում էք թէ՝ չենք գնում գիւղ, նախատում ենք քաղաքի փարթամ կեանքը, բայց մենք ինչ անենք, երկրորդ տարին է գիւղումն ուսուցիչ եմ, փող չեմ ստացել և որտեղից ստանաս, նա հաց չունի ուտելու. քեզ ինչ տայ։ Աշակերտներիս գրքերի փողի համար պ. Սամսոն Յարութիւնեանին դիմեցի... Ի՞նչ անեմ, էլի ուժս իմ ղազախեցուն է պատում, բա ում դիմեմ, էն ով է ախր ականջ դնում, էլի իմ ղազախեցին ինձ կը օգնէ, հարէնս նրան դնեմ...։

Ա. Գետ.

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՌՈՒՍ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ազատագրական շարժումը, որ արդէն բռնել է ռուս ժողովրդի բոլոր խաւերը, ապարդիւն չէ անցել և հոգևորականութեան համար։ Հետզհետէ աւելի ու աւելի են լսվում նրա շարքերից բողոքող ձայներ և քաղաքական անպարկեշտութիւնների թէր եկեղեցու պաշտօնեաների մէջ կառավարչական իշխանութեան տեսակէտից [illegible] է զգալի չափերով։ Մօտ օրերս իր համակրութիւնն է արտայայտել ազատագրական շարժմանը Տամբովի թեմական ժողովը։ Ժողովին մասնակցող բոլոր անդամների միջից—«իսկական ռուս մարդկանց» կուսակցութեանը յարել են միայն 5—10 հոգի։ Ժողովի մեծամասնութիւնը ցանկութիւն է յայտնել ժողովի պրոգրամը ընդարձակելու, ռուսաց հասարակութեանը յուզող օրվայ հրատապ հարցերը. իշխանութեան, հողի, ազատութեան, մահվան պատժի մասին և այլն։ Բայց նախագահը այդ ցանկութիւնը մերժեց այն հիման վրա, որ այդ հարցերի քննութիւնը ժողովի ծրագրի մէջ չէ մտնում։ Ժողովը որոշել է, «հրաժարվել եկեղեցական հողերից յօգուտ ծխական խորհուրդների, այդ խորհուրդները կենդանացնելու նպատակով և գործնական կերպով իրագործել քրիստոնէական սիրոյ սկզբունքը լաւ դպրոցներ, գրադարաններ հիմնելով, աղքատներին նիւթական օգնութիւն տալով և այլն»։ Ժողովը արդարացի և օրինական համարեց ազատել հոգևորականութիւնը ստորացուցիչ հարկերից, որոնք վարկաբեկ են անում քահանայական հեղինակութիւնը և արժանաւորութիւնը և պետական ռոճիկ նշանակել դրա փոխարէն։ Ընդունել են, վերջապէս, նոր յատուկ օրգան հրատարակելու հարցը, որտեղ կարող լինէին նրանք տպագրել շիտակ ու անկեղծ յօդուածներ ժողովրդի ու հոգևորականութեան կեանքի մասին, կենդանի քարոզներ, համարձակ ու ազնիւ ճառեր եկեղեցական կեանքի անտօրմալ երևոյթների, իշխանութիւնը չարաչար գործադրելու մասին և այլն։

Բոլորովին այլ պատկեր են ներկայացնում նոր հովերի վերաբերմամբ ուղղափառ հոգևորականութեան վարչութեան բարձր ներկայացուցիչները։

Մօտ օրերս Վեատկայի թեմական ժողովը աւարտելով իր պարապմունքները, «Ур. Жизнь» լրագրի ասելով, ստիպված է եղել մի այսպիսի որոշում կայացնելու։ «Ի նկատի առնելով, որ թեմական ժողովի որոշումներից շատերը, որ թելադրված են կեանքի պահանջով, չեն հաստատվում սրբազան Ֆիլարետի կողմից, մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում և մեզ ազատ համարում թեմական կեանքի ապագայի համար որևէ պատասխանատուութիւնից»։

—Սինօդի նախկին աւագ-պրօկուրօր Պօբեդօնօսցևի նախագիծը հոգևորականութեան ծառայութիւններից օգտուելու ազգաբնակութեան վրայ ադմինիստրատիւ ներգործութիւն ունենալու համար, արդէն իրականութիւն է ստացել։ Թեմական բարձր իշխանութեան վրա պարտաւորութիւն է դրված աչալուրջ կերպով հսկել քահանաների գործունէութեան վրա, մանաւանդ գիւղականների և ղեկավարվելու համար տալ նրանց համապատասխան հրահանգներ։ Բացի դրանից թեմական իշխանութիւնը պարտաւոր է նկատել ադմինիստրատիւ հրամանները եռանդով կատարողներին և վարձատրել իւրաքանչիւրին իր արած ծառայութեան համեմատ։ («Око»)

«ՀԱԲԼԻԼ ՄԱԹԻՆ» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հնդկաստանում հրատարակվող և իրան «սուրբ» կոչող «Հաբլիլ-Մաթին» պարսկերէն թերթը Պարսկաստանում ամենատարածված և ազդեցիկ թերթն է, ուրեմն հայերիս ընդհանրապէս, իսկ պարսկահայերիս մասնաւորապէս, այդ թերթի բռնած ուղղութիւնը դէպի հայերը անտարբեր չէ։ Որպէս զի մի փոքր գաղափար տուած լինենք ընթերցողներին, թարգմանաբար ներքեւում առաջ կբերենք սեպտեմբեր ամսի № 6-ում լոյս տեսած «Նամակ Թաւրիզից» մի անստորագիր թղթակցութիւն ամբողջապէս, և խմբագրութեան կողմից ծանօթութեամբ։ Թղթակցի վերին աստիճանի ազէտ, պրովօկատոր, հայակեր լինելը ապացոյցի կարօտ չէ, և ուշադրութեան անգամ արժանի չէ այդպիսի զառանցանքը, սակայն տեսնենք իրան «սուրբ» կոչող Պարսկաստանի մենտոր առաջնորդողի յաւակնութիւն ունեցող թերթը ինչպիսի խնկարկութեամբ է ընդունում մի չարամիտ և խելառ թղթակցութիւն, որի պրովօկատորութիւնը ակնյայտ է։

Սուրբ թերթի խմբագրութիւնը անկեղծ և անաչառ ձևանալու համար նախ խոստովանում է, որ «պարսկահայերից ոչ մի վատ բան տեսնված չէ և թէ ծառայութիւն էլ արած և անում են». յետոյ թափում է թոյնը, խորհուրդ տալիս կառավարութեանը, որ աչալուրջ հսկէ ի բնէ խռովարար, ապստամբ և գայլի ձագեր վրա։

Իսկապէս շատ հետաքրքիր է այդ սուրբ թերթի խմբագրութիւնը, որ այնքան անհանգիստ է և այնքան ճչացել է, որ, ինչպէս ինքն է ասում, ձայնը կտրվել է բազմամիլիօն բնակիչ ունեցող Պարսկաստանում մի բուռն ցիր ու ցան ընկած, անզէն, հողագործ. արհեստաւոր և վաճառական հայերի համար, թէ ինչպէս իր սրատես աչքերից խուսափում է օսմ. կառավարութեան ոտնձգութիւնները, որ մի տարուց աւելի է, ինչ առանց պատճառի գրաւել և գրաւում է դարերից ի վեր Պարսկաստանին պատկանող անվիճելի գաւառներ, գիւղեր. իսկ քրդերի՝ այդ զինված գազանների ասպատակութիւններին, ապանութիւններին, թիւ ու համար չը կայ, որից տուժում է և թուրքը, և հայը, և ասորին անխտիր։ Ամեն տարի քիւրդերը ապստամբում են կառավարութեան դէմ, հարկ չեն վճարում, հարկահաւաք զինուորներ սպանում և աւերութիւնը անհոգին ծախքերի մէջ գցում. հռչակաւոր Շէյխ Իբադուլահի յայտնի արշաւանքը 80 հազար քիւրդ զինված խուժանով, նրա արած աւերածութիւնները, կոտորածը դեռ այսօր էլ թարմ են իւրաքանչիւր ատրպատականցու յիշողութեան մէջ։ Ո՞վ «սուրբ», ազգասէր, հայրենասէր թերթի խմբագրութիւն, այդ բոլորը տեսնելու և լսելու համար ինչու էիք կոյր ու խուլ ձևացել, ինչու էր ձեր լեզուն պապանձել, չէիք խօսում, խորհուրդ չէիք տալիս, որպէս զի կառավարութիւնը միջոցներ ձեռք առնէ, զինաթափ անէ, սահմանագլխից գաղթեցնէ, նրանց տեղը պարսիկներ բնակեցնէ, որպէս զի այսօր ազգը և տէրութիւնը դժուարութիւնների չը հանդիպէին։

Վա՜յ այն երկրին ու ազգին, որ ձեզ նման առաջնորդ և խորհրդատու ունենալու դժբախտութիւնը կունենայ։

Ահա Թաւրիզի վերոյիշեալ նամակի թարգմանութիւնը.

Յով. Շահ.

«Հայերի վիճակը և նրանց վարմունքը օսմանեան երկրում, օսմ. պետութիւնը քարուքանդ անելու նրանց ձգտումը, առաջ եկած թշնամութիւնները, կրակները որ վառված են ամեն ոք գիտէ. այսուամենայնիւ օսմանեան պետութիւնը ոչինչ չը խնայեց նրանց համար, պետութեան ծառայութեան մէջ մուսուլման թուրքերից և ուրիշներից աւելի հայերին օգնում էր, ոչ մի պաշտօն, մինչև անգամ մինիստրութիւն նրանցից չը խնայեց, և նրանց քանակը ծառայութեան և պաշտօններում մուսուլմաններից աւելի էր, և ոչ մի բանում ազատութեան հանդստութեան և փառքի կողմից մուսուլմաններից պակաս չէին, գուցէ առաւելութիւն ունէին։

Եւ սակայն պատմութեան էջերը հաստատուն վկայ են նրանց անհաւատարմութեան և ապերախտութեան՝ ամեն ոք գիտէ, որ օսմ. երկրում, Կ. Պօլսում, Իզմիրում և նրանց շրջակայքում, ինչ խառնակութիւններ տեղի ունեցան, որ վերջ ի վերջոյ կառավարութիւնը հազարաւոր հնարքներով, անթիւ անհամար սպանութեամբ և շատ արիւնհեղութեամբ կարողացաւ չարիքը արմատախիլ անել և առերևոյթ հանդստացնել նրանց։

Նրանից յետոյ, ապստամբութիւնը և յեղափոխութիւնը պատճառ եղաւ նրանց բոլոր ծառայութիւններից և առանձնաշնորհութիւններից զրկվելուն։ Ի նկատի ունենալով նրանց անհաւատարմութիւնը և ապերախտութիւնը ըստ արժանոյն սկսեցին վարվել նրանց հետ այժմ որ օսմ. հարուստը տեսան, առերես կառավարութեան հակառակ չեն գործում։

Ռուսաստանի և Կովկասի հայերը ամենուրեք գ ո ընդհարումներով զբաղված են, երկու տարի է ամեն օր, ամեն կողմից լսվում է այս ինչ քաղաքում, այն ինչ գիւղում հայերը մուսուլմաններին, առաւելապէս պարսկաստանցիներին տապալակեցին, շատերին սպանեցին, ապրանքները կողոպտեցին, ինչպէս որ Բագու քաղաքում մուսուլմանների ուսումնարանի վրայ թափեցին, շատ մուսուլման անմեղ մանուկների կտոր կտոր արին (չը նայած որ ոչ մի ազգի մէջ երեխան մեղ չունի), նմանապէս ուրիշ գործեր և սպանութիւններ, որ ամեն օր անում են. արիւնը, որ մուսուլմաններից, առաւելապէս պարսկաստանցիներից, թափվում է, արտասահմանի թերթերի էջերում երեւում են:

Բայց բարձր կրօնապետը... այդ լուրերը ռուսաց իմպերիալների վկայութեամբ, որ անսուտ և արդարասէր վկաներ էին, և ի չիք դարձրեց մուսուլմանների վրէժխնդրութիւնը (Աստուած նրա վիզը կոտրէ և տունը աւերէ որ Աստուծոյ կրօնը իր խաղալիքն է շինել): Անկասկած այդ երկու տարվայ ընթացքում առնուազն 50,000 մուսուլման, որից պակասը 20,000 պարսկաստանցի եղած են, խանջարներով, սրերով, գնդակներով, դինամիտով կոտորված և ոչնչացած են:

«Այդ հօտին նայիր, ինչպէս հանգիստ արածում է»—միշտ լրագիրներում կարդում, տեսնում ենք, որ այս ինչ սահմանագլխում այս ինչ հայը մաքսատան քարտուղար է, այս ինչ քանակութեամբ զէնք և պայթուցիկ նիւթեր ներմուծել է հայի անուամբ, ծածուկ մաքսատնից անցել է, նմանապէս այս ինչ գիւղաքաղաքի կամ գիւղերի հայերը մասը են յեղափոխութեան, այս ինչ հայից այս ինչ թշնամական բանը տեսնվում կամ լսվում է:

Երբոր զրոյց երևակայում եմ նրանց մտքերը, զզզում եմ. վերջապէս միթէ մեր կառավարութիւնը իր դրացիների վիճակը չի տեսնում և նրանց որպիսութիւնից տեղեակ չէ:

Նոր յայտնութիւնն այս է. Էնզելիի և Թաւրիզի մաքսատանը զրաւել են շատ զրգռիչ թերթեր, քառթիկներ, ըստ «Ախտարի» 3500, հայերէն, Ժենևում տպված, ուղարկված պարսկահայերին սովորեցնելու և առաջնորդելու դէպի յեղափոխութիւն, ապստամբութիւն և արիւնհեղութիւն:

Նոյնպէս Էնզելիում շատ թերթեր ձեռք ընկած են. մուսուլման ծառայողները երկիւղից, մի գուցէ մաքսատան ծառայողները կառավարութեան յայտնեն, իրանք են յայտնել. կառավարութեան հրամանով բոլոր թերթերը մաքսատան մէջ այրել են:

«Հաբլիւլ-Մաթին»-ի խմբագրութեան կողմից:

«Գիտես ինչ ասաց Ջալը հովաբ Ռուստամին. թշնամուն չէ կարելի թոյլ, ողորմելի, խեղճ համարել. շատ տեսանք փոքրիկ աղբիւրի ջուրը, հէնց որ շատացաւ, ուղտ ու բեռ տարաւ:

Որովհետև շատ ճչացինք, շատ աղաղակեցինք, մեր կոկորդները թուլացան, մեր ձայնը կտրվեց, երբեք կառավարութեան ականջը չը մտաւ, և ոչ ոք բանի տեղ չը դրեց: Մենք չենք ասում որ պարսկահայերը, մանաւանդ Սպահանի հայեր արտասահմանի հայերի նման են, և խառնակիչ և խռովարար են, որովհետև մինչ այժմ նրանցից մի վատութիւն տեսնված չէ, և ոչ մի գործ, որ ապացոյց լինէր յեղափոխութեան, ապստամբութեան, չէ նկատվել, որ կարողանանք վճռողաբար նրանց խռովարար լինելու հրամանը արձակել. գուցէ մինչ մի աստիճան ծառայութիւն արել և անում են, սակայն կառավարութիւնը չը պէտք է աչալրջութիւնը բաց թողնէ ձեռքից, անփոյթ լինէ և իր երկու դրացիներից չխրատվէ:

«Աղբիւրի ակը բահով կարելի է կտրել»... հէնց որ շատացաւ փիղով էլ անցնել չի լինի: Եթէ ճարահատ՝ Մաքսապետ պ. Նոսի հրամանով հայերը ծառայութեան մէջ լինեն, և եթէ պ. Նոսի հրամանին չէ կարելի հակառակել, ուրեմն սահմանագլխի ամեն մաքսատներում մի վստահելի մարդ նշանակեն, որպէս զի լուրերից, մաքսապետի և հայերի որպիսութիւնից տեղեկութիւն ձեռք բերէ, կառավարութեան յայտնէ. մի գուցէ միանգամայն խռովութեան կրակը այնպէս բորբոքվի, որ կառավարութիւնը անզօր գտնվի հանգցնելու:

Ռուսահայերին և տաճկահայերին ծառայութեան մէջ ընդունելը օձը գրկում սնուցանել է, թէև այդպիսով էլ չէ կարելի մտատանջութիւնից հանգիստ լինել, որովհետև այդ ազգը ի բնէ խառնակիչ, յեղափոխական և կռուասէր է. այդ դէպքում կառավարութեան ներելի չէ ոչ մի պարսկահայի տէրութեան հիմնարկութիւններում ծառայութիւն տալ:

Մինչև անգամ ամեն մէկի համար երկու հոգի հսկող է հարկաւոր, որ նրանց գործողութիւնից տեղեակ լինէ, մի գուցէ յանկարծ ապստամբեն, տէրութիւնը և ազգը դժուարութեան հանդիպեն. որ ասած է.

«Գայլի ձագը վերջում գայլ կը դառնայ թէև ադամորդու հետ մեծանայ»:

(Մեր նկատողութիւնները յաջորդ անգամ):

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, նոյմ. 24-ին, Հայ Դրամատիկական խումբը ժողովարանի դահլիճում խաղաց Ցագարելու «Խանումա»-ն 3 գործ. թարգմ. Արաքսեանի:

Այդ օրը դրվելու էր նոր թարգմանված Դրէյերի «17 տարեկաններ» 5 գործ. դրաման: Սակայն տ. Աւետեանի հիւանդութեան պատճառով խումբը խաղաց «Խանումը»:

«Խանումը» իր առօրեայ կեանքի մի պատկերի արտացոլմամբ և պարզութեամբ, ինքնաբաւութեամբ, դերասանների խաղով միշտ զուարճալի տպաւորութիւն է գործում հանդիսականների վրայ: Կենտրոնական «Խանումի» դերը յանձին հայկական բեմի թերևս միակ խանում տ. Վարդուհու խաղի, չէր պարունակում այն համակրելի և իսկական հարազատութիւնը, որպիսին ունի վրաց դերասանուհի տ. Գաբունիան, որի «Խանումը» իրօք, իր աննմանութեամբ սքանչելի է, և զարմանալի էլ չէ որ հանգուցեալ Ցագարելին գրել է այդ պիէսը յատուկ նրա համար... Գ. Արաքսեան շատ գեղեցիկ և բնական տարաւ պարզասիրտ Ակոփի դերը, երգելով մի քանի կուպլետներ զուարճալի նուագածութեամբ և արժանանալով հանդիսականների եռակի ծափահարութիւններին: Աչքի էին տ. Նանիկեան, պ. պ. Յարութիւնեան, Ալպալեան: Գ. Արէլեանն, մեր կարծիքով, բոլորովին անհամապատասխան էր Կինյազ Վանօյի դերը:

Մի անգամ ևս արձանագրում ենք այն հանգամանքը, որ ժողովարանի վարչութիւնը թատրոնի—ժողովրդի այդ երկրորդ դպրոցի դռները փակում է «ոչ երջանիկների» համար իր այն որոշմամբ, որով ոչ-անդամը վճարելու է նախ մուտքի փող 1 րուբլի, և ապա արդէն կարող է տոմսակ գնել, որպիսի կանոնը, արդարև, միանգամայն անհասկնալի է թատրոնի ծարաւի զոհեր միջին դասակարգի համար:

Կրթութեան և լուսաւորութեան նպաստից ճանապարհը աշխատեցէք աւելի լայն բանալ, պարոնայք, ոչ թէ մամոնայի միջոցով հնարաւորութիւն տուէք մի որոշ «բախտաւոր» դասակարգի «ժամանակ անցկացնել», դասակարգի, որը առանց դրան էլ շատ և շատ միջոց և ժամանակ ունի իր հաճ վրա մտածելու միայն...

S. E.

ՆԱՄԱԿ ՍՈՒՐԱՄԻՑ

Հոկտեմբերի 15-ին

Մէկ տարի է, ինչ վերաբացվել է Սուրամի հայոց դպրոցը: Անցեալ տարի դպրոցը կառավարում էին քահանաները և մի վարժուհի: Ներկայ տարվայ ամառը հոգաբարձութեան նախագահ Ստեփան Գրձելեան առաջարկութիւն արեց հոգաբարձուներին, որ քահանաների ձեռքում դպրոցը թողնելը կորստաբեր է, քանի որ նրանք ծանրաբեռնված են իրանց ծխական պարտաւորութիւններով, որ նրանք՝ երկու քահանայ՝ հովվում են Սուրամի մօտ 250 տուն հայերին, այլ և Խաշուրի և Օսիաուրի գիւղերի հայերին: Հիմնվելով այս հանգամանքի վրայ՝ Ստեփան Գրձելեան առաջարկեց հրաւիրել երկու ուսուցիչ և մի վարժուհի:

Քահանաները տեսնելով, որ պէտք է հրաժարվեն իրանց և զրկվեն աւելորդ պատառից, սկսում են ժողովրդի մէջ տարածել լուրեր, որ Գրձելեան իրանց թշնամին է, որ նրանք անցեալ տարի 120 րուբ. ծառայեցին ուսումնարանին և զիջումն արին. այս տարի էլ պատրաստ են էժան ծառայելու, հարկաւոր չէ ուսուցիչների հրաւիրել, անհրաժեշտ է միայն մի վարժուհի, որի հետ միասին անցեալ տարվայ պէս կը կառավարեն դպրոցը:

Քահանաների այս խօսքերին հաւատում են հոգաբարձուները և շատերը ժողովրդից: Ս. Գրձելեան, տեսնելով, որ իր անկեղծ մտադրութեան կասկածանքով և թերահաւատութեամբ են վերաբերվում, բարձրանում է և բարձրաձայն ասում. «Թէև հոգաբարձուներդ և շատ անձինք պնդում էք, որ քահանաները լինեն ուսուցիչ՝ բայց ես զգում եմ, որ էժան միսը լաւ կերակուր չի պատրաստի և թէկուզ կախաղանի վրայ բարձրացնէք՝ ես կը շարունակեմ պնդել, որ քահանաները դպրոցի համար անպէտք են. դրանք լաւ են միայն քելէխ և խնջոյք ուտելու մէջ»: Այս խօսքերի վրայ ուշադրութիւն չը դարձրին և քահանաները կրկին մնացին ուսուցիչներ: Ստեփան Գրձելեան պարտութիւն կրեց և բարկացած՝ չէր խառնվում դպրոցի գործերի մէջ:

Եկաւ սեպտեմբերը: Դպրոցը բաց արին քահանաները և սկսեցին պարապմունքները: Հոգաբարձուները դիմեցին քահանաներին հարցմունքով, որ նրանք հաստատ են իրանց տուած խօսքի վրա և այս տարի էլ կը ծառայեն 120 րուբլով իւրաքանչիւրը, սակայն նրանք ասացին, որ ամեն մէկը այս տարի պէտք է ստանայ 240 րուբլի: Հոգաբարձուները բարկանում են քահանաների վրա, նրանցից երկուսը՝ Շուղարեան և Զարէեան՝ գնում են Միխայլովօ Ս. Գրձելեանի մօտ, որն այնտեղ է ապրում և ասում. «Քո խօսքերն արդարացան. քահանաները փոխեցին իրանց խօսքը և աւելի են պահանջում. եկ Սուրամ խորհրդակցենք, եթէ աւելի ռոճիկ պէտք է տանք, աւելի լաւ է ուրիշ ուսուցիչների հրաւիրենք»:

Խաչվերացի մեռելոցի օրը Ստեփան Գրձելեան գնում է Սուրամ, կանչում է քահանաներին և նախատինքով ասում. «Ինչու էք խաբում հոգաբարձուներին և ժողովրդին. ինչպէս խոստացել էք, ինչու այնպէս չէք ծառայում»: Քահանաները պատասխանում են, որ 240 րուբլուց պակաս չեն կարող ծառայել: Առաջարկում են ամեն մէկին 180 ռուբլի, բայց քահանաները դարձեալ չեն համաձայնվում: Սրանից յետոյ հոգաբարձուները յայտնում են քահանաներին, որ նրանք այլևս իրաւունք չունեն դպրոցում ոտք կոխելու:

Սրանից յետոյ Գրձելեան և Շուղարեան գնում են Թիֆլիս, վարձում են երկու ուսուցիչ և մի գիմնազիստուհի վարժուհի և բերում: Կանոնաւոր ուսումը սկսվում է դպրոցում հոկտեմբերի 2-ին: Եւ այսպէս շնորհիւ քահանաների անբաւականութեան՝ երեխաները մի ամիս ուսումից զուրկ մնացին...: Չը մոռանանք յիշել, որ Գրձելեան առաջարկեց Տէր-Պետրոսեան քահանային՝ ստանձնել կրօնի դասերը, սակայն նա չը համաձայնվեց, պահանջելով և ուրիշ առարկաներ: Քահանաները գործադուլ արին, բայց պարտութիւն կրեցին, զրկվելով և նրանից, ինչ ստանում էին... Դպրոցի ծախսերն աւելացան միայն 295 րուբլով:

Դպրոցը դրվեց հիմնալի հիմքերի վրա: Դասատուութիւնը կանոնաւոր է, դպրոցի կեանքը խաղաղ: Արտայայտում ենք խորին շնորհակալութիւն պ. Ստեփան Գրձելեանին այս համակրելի քայլի համար: Դէպքից օգտվելով, յայտնում ենք, որ սա այն Գրձելեանն է, որ 1897 թ. կռիւ մղեց պրիստաւ Տէր-Յակոբեանի դէմ, որովհետև նա փորձել էր խանգարել Ջրօրհնէքի ծէսը, սակայն քահանաները շատ չարչարեցին Գրձելեանին և տապալեցին՝ հեռացնել տալով երեսփոխութիւնից: Այս մասին 1897 թ. շատ գրվեց «Մշակ»-ում: Ստ. Գրձելեան այն ժամանակ ևս մեծ նուէր թափեց դպրոցի վրա՝ դարձնելով դպրոցը երկդասեան, բազմապատկեց եկեղեցու եկամուտները, սակայն կոյր ժողովուրդը քահանաներին հետևելով՝ նրան չը գնահատեց: «Գրձելեանին մենք հեռացնում ենք խաղաղութիւն պահպանելու նպատակով, մենք խոստովանում ենք նրա արած լաւութիւնները, ոչ մի երեսփոխ այդքան ամագ չէ արել, բայց քահանաների հետ չէ հաշտվում»... Այսպէս էին խօսում 1897 թ. մարտի 3-ի ժողովում Սուրամի ծխականները: Եւ այս նրա համար, որ Ստեփան Գրձելեան բողոքող և արդարութեան համար մաքառնող մարդ է...

Ս. Գրձելեան պահանջել է և բերել է տալ եկեղեցու ութը տարվայ մատեանները քննելու համար: Հետևանքի մասին կը հաղորդենք:

N. N.

ՄԻ ԷՋ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մեր Գենուալի մարդկանց մի մասն այն կարծիքին էր, թէ որոշ գործողները սկզբունքով ընդունել են նպատակին հասնելու համար, միջոցների մէջ ոչ մի խտրութիւն չը դնել: Այդ կարծիքը տեղին էր այն պատճառով, որ մեր հերոսների միմեանց յաջորդող սխրագործութիւնները՝ շատերի մէջ համ սարսափ, համ զզուանք յարուցին: Բայց մարդկանց մի մասն էլ, սրանց անտանելի արարքը ակամայից տանելով, կրկնում էր. «Կը գայ ժամանակ, որ դրանց քթին խփելով, կասեն, որ այդ չէ իսկական օրէնքն ու դատաստանը»: Եւ ահա այժմ նամակներ են, որ տպվում են «Մշակ» լրագրի մէջ, որոնց մի բաժինը՝ դաշնակցականների նրանց մի մասը մինչև երկինք է բարձրացնում ու նահատակների ոսկորներին հանգիստ մաղթում, իսկ միւսը լիքն է բողոքներով:

Ես էլ խօսում եմ մեր տեղի դաշնակցականների գործունէութիւնից: Բայց աւաղ, որ իմ խօսքը նրանց նողկալի արարքների մասին է: Ահա նրանք.

1) Մի աղջիկ բռնի պսակել տուին, առարկելով, թէ այն աղջիկը յղիացել է պսակվող տղայից: Մինչդեռ պարզվեց, որ այդպիսի գործ կատարված չէ եղել:

2) Գրաւոր կերպով յայտնեցին, որ ոչ ոք իրաւունք չունի նրանց գործերի վերաբերմամբ որևէ խօսք ասել կամ նոյնիսկ ընտանեկան կերպով հաշիւ պահանջել:

3) Մի աղքատ, բայց իրանց տեսակէտով ըմբոստ մարդու հրամայեցին իր ծախած կալքը գնողից յետ առնել և պակաս գնով տալ իրանցից մէկին: Հակառակ դէպքում 200 րուբլի տուգանք ստանալ: Նրանք շատ լաւ գիտեն, որ այդ կալքը ծախողը վաղուց իր ստացած փողը մսխել է և անկարող է կրկին փող ձեռք բերել ու տալով առաջին գնողին՝ իր կալքը յետ գնել: Բացի դրանից, որ այդ կալքը, առաջ որ ծախվել էր 260 րուբլով, այժմ պակասով է ծախվում, որովհետև ընկել է:

4) Գիւղի պահպանութեան համար վճռված էր ոչ ոքին չը թոյլատրել օտարութիւն գնալու: Բայց այս գործի մէջ էլ խնամութիւնը իր տխրահռչակ դերը կատարեց, օրինակ, վճիռն այժմ էլ կատարվում է, բայց կան մարդիկ էլ, որ նրանց վկայական-արձակումով օտարութիւն են գնում. Մինչդեռ երկու-երեք աշխատաւոր ունեցողներից ոչ ոք թոյլտուութիւն չէ ստանում և նրանք աղքատութիւնից նստած, մի դիւթական գաւազանի են սպասում, որ իրանց համար ևս մի ողորմութեան դուռ բացվի:

5) Շատերին են տուգանքի ենթարկել և շատերի հանդերձը բանալով՝ ճիպոտով ծեծել, մինչև որ արիւնը հոսել է: Հէնց մի քանի օր սրանից առաջ Շվանիձորցի Փարամազ Մարտիրոսեանին, որը մի պատուաւոր և համեստ ծերունի է, մինչև անզգայանալը ծեծել էին և սարսափը կատարեալ անելու համար, կապել էին գրաստի վրա և Մեղրի ցուցադրելով բերել: Իսկն ասած գիւղացիների վրա ջուր մաղեց:

6) Մի քանի տիկիններ, մի շատ համեստ ամփոփվարով, փող են հաւաքել և մտադիր են մի որոշ գումարի հասնելուց յետոյ, ձեռնագործութեան մի ճիւղի սարքն գնել, իրանց համար մի թեթև պարապմունքի ձեռնարկել: Բայց նրանց ստիպում են դադարեցնել:

7) Տուրքերը ծանրացել են: Աղքատները մինչև կոկորդն են խրվել պարտքի մէջ, իսկ հարուստների և ունեորների համար մի նոր դուռ է բացվել հարստանալու: Մի կողմից սրանք, իբր թէ ձայնակցում են բազմամիլիոն ռուս ժողովրդի բողոքաւոր ձայնին, միւս կողմից էլ իրանց խնամքի տակն առած ժողովրդին հարստահարում ու քանդում են:

8) Սրանք եղան պատճառ, որ օրը ցերեկով օրդուբադցիք և ուրիշները մեղրեցիների 450 գլուխ այծ ու ոչխարը քշեցին տարան, և Օրդուբադի հետ մեր յարաբերութիւնը երկար ժամանակ կտրված մնալով, մեզ յետին ծայր յուսահատութեան մէջ գցեցին: Բայց Նախիջևանի պ. գաւառապետը մի կերպ բացեց մեր ճանապարհը և վերացրեց բոյկոտը:

Դրանք, խառնվելով մեր շինարարական բոլոր գործերի մէջ, մեզ յետին թշուառութեան են հասցրել:

Դուք, Գենուալի գործողներ, ինչ խորհուրդ էք տալիս. գրածս բաւական է, թէ ձեր սխրագործութիւններից էլի համար ասեմ: Ախր որ էլի պարզեմ, դուք, կոկորդիլոսներ և պարազիտներ, «մատնութիւն, մատնութիւն» էք բղաւելու: Բայց չէ. խօսք կայ՝ ժողովրդի մէջ, խօսք էլ կայ՝ սրտի մէջ. Ես կը խնդրէի, որ հէնց գրածներիս համար պատասխան տայիք:

Ձեր շնորհիւ մեր օրը սև է ու նեղ: Ձեզ հետ խօսել չէ լինում: Ձերն այժմ «զիմմա, վէր» է, այսինքն՝ մի խօսիր, տուր:

Լիայոյս եմ, որ այս բողոքը կը հասնի ղեկավարներին և առաջնորդներին, որոնց համար անցեալի դասը շատ բարձր է և նրանք իրանց տխրահռչակ արբանեակներին օրինաւոր կերպով սանձահարեն, արբանեակներ, որոնք մեր սև բախտից այս խուլ անկիւններում անհաշիւ գործում են, անարգելով սուրբ և սրբագործված ինչ դաւանութիւնը: Ախր մենք էլ մարդ ենք: Սրան ժողովուրդ կասեն:

Ուրախ կը լինէի, եթէ տեղիս գործողները քաջութիւն ունենային իմ դէմ աշկարա դուրս գալու գրածս ջրելու համար: Բայց ոչ. դրանց զէնքը ստոր միջոցն է, և ես պատրաստ եմ տանելու նրանց բանտի և ծեծի խաչը և նոյն իսկ կախաղանը: Գոնէ տեսնողները կը վկայեն, որ ես իմ կրած պատժի մէջ անմեղ էի, բայց իմ մեղքը կայանում էր նրա մէջ, որ ես բողոքեցի չարիքի դէմ:

Մ. Շահեանց

Հոկտ. 12-ին, Մեղրի գիւղ:

ՆԵՐՍԷՍ Վ. Մ. ԹԱՆԴԵԱՆԸ

Ես բաւական զարմացայ, երբ լսեցի, որ Տաթևի փոխ-առաջնորդը, Ն. վ. Մ.-Թանդեանը դիւանապետ է նշանակված: Ինչպէս, հարցնում էի ինքս ինձ. չէ՞ որ նրա դէմ դատ էին բաց անում Տաթևի վանքի եկամուտների ու ծախսերի հաշւի համար: 4 տարուց յետոյ ըստ սովորականին հաշիւ էին բարեհաճել նախնորական ինքնիշխանին հաշւի անուն տալ և ահա ոչինչ չարած դրա վերաբերեալ, նրան նոր պաշտօն են տալիս, և այն էլ առաջվանից բարձր: Սակայն զարմանքս իսկոյն անցաւ, երբ լաւ մտածելով մի շատ սերտ անալօգիա գտայ այս հոգևոր չինօվնիկութեան և աշխարհականի մէջ: Պարզ էր, որ այստեղ էլ նոյնն էր կատարվում՝ ինչ որ բիւրօկրատական կառավարութեան մէջ, այսինքն, երբ մէկ պաշտօնեայ իր քէֆին կամայականութիւններ անելով մի տեղ այնքան է մնում, որ նեղում է նրան, նրան են կանչում և տեղափոխում սովորաբար բարձր պաշտօնով:

Միթէ այս նոյնը չէ կատարվել և Մ.-Թանդեանի վ.-ի վերաբերմամբ. չէ՞ 4 տարվայ ինքնագլխութիւններն ու անհաշւութիւնները չը ծնան՝ նրան արդէն իսկոյն և նոր բարձր, աւելի պատուաւոր պաշտօնի է կոչում մեր հոգևոր բիւրօկրատիան:

Ինչպէս իմացանք, Ն. վ-ի գործերի քննութեան համար մարդ է ուղարկվում. իհարկէ անշուշտ իր նմանը: Պարզ է, որ Ն. վ-ը իր վրա բարդած անհիմն մեղադրանքներից յետոյ աւելի շատ, քան երբևիցէ եղել է, մաքուր և լուսեղէն կը ներկայանայ:

Ի՞նչ է արել այդ ինքնիշխան չինօվնիկներից մէկը, Մ.-Թանդեան վ-ը իր հայրենի գաւառի համար այս քանի տարվայ ընթացքում: Նոր, առաջադիմական ոչ մի քայլ դէպի առաջ իր նախորդներից, եթէ ոչ դէպի իր... փառք տուէք նախորդներին Խոսրովներին ու Գրիգորներին:

Երբ Ներսէս վ-ը յաջորդ եղաւ (ուշադրութիւն), ժողովուրդը մեծ յոյսեր ունէր նրանից: Շատերը, աւելի միամիտները, խաբվելով նրա ուսուցչական գործունէութիւնից և անգիտակցաբար սև փառքով յեղափոխող ազգիւսութեան առաջ՝ նրան համար դուռ էին ներկայացնում վերանորոգչական ու կուլտուրական նպատակներով ու ձգտումներով, բայց լոկ միամիտների և անփորձների աչքում էր այդպէս: Շուտով երևան եկան թայֆայական ու խնամիական շահերն իբրև սովորական նպատակներ ու ըղձեր:

Օրինակ Տաթևի վանքը ունի սուրբ հօրը բարեկամ (խնամի և քաւոր) երկու քարտուղար, որոնցից մէկը նոյն իսկ Գորիսում է նստում (25 վերստի վրայ քարտուղարութիւն է անում!!!), երբ նոյն հօր ասելով—վանքը շատ էլ գրաւոր գործեր չունի, որովհետև շատ բան վերևից է գալիս պատրաստի:

Սկզբում Ներսէս վ-ը ուզեց մաքառել մեր կեանքի ցաւոտ կողմերից մէկի, անչափահաս ամուսնութեան դէմ. նա արգելեց 16 տարեկանից փոքր ամուսնացնել, բայց շուտով մոռացութեան տուեց այդ, ապրելու ու պայքարի անընդհատ կռիւը շատ պարզ նպատակով. որովհետև դրանով ընդդիմադրութեան պիտի հանդիպէր, ապա ուրեմն ժողովրդին չը պիտի գոր գար: Միայն թէ էժան ժողովրդականութիւն վայելէ...

Սակայն Մ. Թանդեան վ-ը մի մեծ (!) գործ է կատարել, նա վանքը պայծառացրել, «ծաղկեցրել» է, բայց ոչ հին մտքով-նորոգելով, այլ արտաքինով. պատերի, ջրերի և հայր սուրբ սիրելի չինօվնիկների համար շատ յարմար օթեաններ, քէֆ անելու, մի քանի օր, շաբաթ, ամիս և այլն (որքան կուզես) զուարճանալու տեղեր ու յարմարութիւնն է ստեղծել նոր վանահայրը:

Երևի ընթերցողին աւելի կը հետաքրքրէ՝ թէ ինչ է արել Ներսէս վ-ը նախ ուսումնական ասպարէզում, Զանգեզուրի նման մի յետամնաց գաւառում: Բացարձակապէս ոչինչ: Եթէ Ներսէս վ-ը կամենայ արդարանալ ըստ սովորականին հայ-թիւրքական ընդհարումներով՝ մենք կասենք նրան, որ Զանգեզուրի գոնէ երկու գլխաւոր մասերը Սիսեանն ու Ղափանը սկզբներում, երբ դպրոցները բացվեցին և արդէն ուրիշ տեղեր բացվում էին, ազատ էին դպրոցից, իսկ յետոյ էլ աչքի ընկնող վնասներ չեն կրել յարձակումներից միւս գաւառների համեմատութեամբ, ու մինչդեռ մենք տեսնում ենք, որ շատ աւերված գիւղեր օր. Նախիջևանի Նազարաբադը, հէնց նոյն տարին դպրոց են պահում. աւելի պերճախօս է քանդված Բաղդոյի օրինակը: Այնպէս որ թուրք-հայկական ընդհարումները լոկ ընդունելի պատրուակներ կը լինեն սուրբ հօր ձեռքում իր առաջնորդական ապիկարութիւնն ու անգործունէութիւնը ծածկելու, քողարկելու համար: Գործի մարդը հրի և սրի միջև անգամ կառաջնորդէր ժողովրդին գործ կատարելու:

Եւ ահա այսօր 4 տարվայ անպտուղ պաշտօնավարութիւնից յետոյ, նա թողած իր հօտը այս կարիքաւոր ու ցաւոտ օրերին՝ բազմելու վեհարանում և քիթը խառնելու հոգևոր կամարիլայի գործերում: Նա՞ իր դերում է, նրան այդպիսի մի պաշտօն էր հարկաւոր երևան հանելու իր ընդունակութիւններն ու ձիրքերը:

Իսկական «գաղափարական» հոգևորականի օրինակելի տիպ, ուսումնասիրութեան արժանի...

Արամ-Արամի

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի նոյեմբերի 20-ին

Քաղաքիս եկեղեցիներում կատարված խուզարկութիւնների վերաբերեալ, խնդրում ենք ճշտութիւնը վերականգնելու համար, երկտողիս տեղ տալ «Մշակ»-ի մօտակայ համարներից մէկում:

Լրագրիդ 213 համարում «Кавказъ» լրագրից առաջ էր բերված թարգմանաբար քաղաքիս Ագուլեաց և Մեղրեցոց եկեղեցիներում կատարված խուզարկութիւնների մանրամասնութիւնները, որը չգիտենք ինչ աղբիւրներից և ինչ շարժառիթներից դրդված խեղաթիւրված է Մեղրեցոց եկեղեցու նկատմամբ:

Յիշեալ եկեղեցում ոչ մի ռումբերի պատրաստի կեղև չի երևան եկել, ինչպէս ասված է «Кавказъ» լրագրում, այլ ինչ որ երկաթեայ հին գնդակներ, հաւանականօրէն մնացած հին պարսկական պատերազմի ժամանակից, որոնք թափված էին եկեղեցու ցինուծեան սենեակներից մէկում: Այդ գնդակներից մինչև վերջին ժամանակներս էլ կարելի էր տեսնել քաղաքիս փողոցների անկիւններում թափված, որոնց երեխաները գործ էին ածում որպէս անմեղ խաղալիք:

Մեղրեցոց ս. Աստուածածնայ եկեղեցու երեցփոխան Աղ. Մելքբէկեանց

Հոգաբարձու Թ. Աղախանեան

«Մշակ»-ի № 226-ում պ. Պայազատ իմիջի այլոց խօսելով հայոց դպրոցների ուսուցչական միութեան բիւրոյի մասին, թիւրիմացութեամբ երկու խոշոր սխալ տեղեկութիւն է հաղորդել: Պ. Պայազատի ասելով ուսուցչական բիւրոն է Յոհաննեան դպրոցի հին հոգաբարձութեանը բոյկոտ հրատարակել: Սխալ է. բոյկոտ հրատարակել է ոչ թէ բիւրոն, այլ ընդհանուր ուսուցչական համագումարը:

Այնուհետև պ. յօդուածագիրը շարունակում է «Դաշնակցութիւնը գաւթելով բոլոր դպրոցները և բիւրօն էլ իր շէֆերից կազմելով՝ սկսել էր յառաջացնել բոլոր տեղերը իր խոնարհ ծառայ ուսուցիչներին. ասացէք խնդրեմ, էլ ուր գնային չխզորները....»

Ուսուցչական բիւրոյի վերաբերմամբ ասած այդ խօսքերն ևս սխալ են:

Ուսուցչական միութեան կենտրոնական խորհուրդը (բիւրոն) երբէք չէ ղեկավարվել կուսակցական միտումներով՝ նրա սկզբունքն է եղել՝ դպրոցից հեռու պահել կուսակցական ու քաղաքական պայքարը և միշտ նոյնն է կրկնել իրան դիմող և պաշտօն որոնող հարիւրաւոր ուսուցիչներին ու վարժուհիներին: Ընդհակառակը՝ եղել են դէպքեր, երբ գաւառից դիմել են և խնդրել այս կամ այն կուսակցութեան պատկանող անհատներ ուսուցիչ ուղարկել իրանց. խորհուրդը պատասխանել է դրանց, որ ինքը ի նկատի չունի ուսուցիչների քաղաքական հայեացքները կամ այս ու այն կուսակցութեան պատկանելը, այլ զուտ դպրոցական-մանկավարժական տեսակէտով է ղեկավարվում:

Որ խորհրդի այս սկզբունքը իրապէս գործադրվել է, ապացոյց կարող է լինել խորհրդի միջնորդութեամբ պաշտօն ստացող ուսուցիչների ցանկը:

Հայոց դպրոցների ուսուցչական միութեան կենտրոնական խորհրդի (բիւրոյի) նախագահ՝

Խ. Յարութիւնեանց

Բագու, 14 հոկտ.

«Մշակը» իր № 223-ում արձագանք էր տըւել եղբ. Զիւանշիրօվների գործարանում տեղի ունեցած գործադուլին: Գործադուլը այժմ վերջացած է բանւորների յաղթանակով, ուստի բոյկոտ եղբ. Զիւանշիրօվների գործարանից վերացվում է:

Բարի եղէք այս երկտողին մի անկիւն շնորհելու «Մշակի» էջերում:

Սոց.-դէմ. բան. հայ կազմ. Բագուի կոմիտէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիբորգի կոչը ստորագրելու համար կովկասեան փոխարքան հեռացրել է պաշտօնից Պետական Դումայի նախկին անդամ ագրոնոմ Մօրևին: Արձակված է պաշտօնից նոյնպէս և Ջիթիշանով Գանձակի նահանգական դատարանի դատախազի օգնականի պաշտօնից:

(«Око»)

Մենք յայտնել էինք, որ առաջիկայ կիրակի օր, հոկտեմբերի 29-ին, տեղի կունենայ կրթական Ջուլհականոցի բացման հանդէսը: Այժմ մեզ խնդրում են տեղեկացնել, որ բացված է աշակերտուհիների ընդունելութիւնը: Ջուլհակութեան արհեստը սովորելու համար սահմանված է չորս ամիս ժամանակամիջոց: Ուսման համար ցանկացողները պէտք է վճարեն չորս ամսվայ համար 15 րուբլի: Ընդունելութիւնը կատարվում է Ջուլհականոցի արհեստանոցում ցերեկվայ ժամի 10-ից մինչև ժամի 1-ը: Ջուլհականոցը գտնվում է Դիբուբովսկայա փողոցում, Իզմիրեանի տանը № 24:

Ի նկատի առնելով, որ Թիֆլիսի քաղաքային արհեստաւորաց դպրոցի աշակերտները ինքնագլուխ ժողով են գումարում և անհնարին է պարապմունքները կանոնաւոր կերպով շարունակել, ուստի յիշեալ դպրոցի մանկավարժական խորհուրդը որոշել է փակել նրան անորոշ ժամանակով: Բացման օրվայ մասին կը յայտարարվի տեղական լրագրներում:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ստացել է կազմված ընտրողական ցուցակներ հետևեալ հաստատութիւններից. ակցիզների վարչութիւնից՝ 17 հոգու, Թիֆլիսի նահանգապետի դիւանատնից՝ 11 հոգու. III հաշտարար բաժնից՝ 14, զինւորական բժշկ. լաբորատօրիայից՝ 7, Թիֆլիսի առևտրի և արդիւնաբերութեան կոմիտէից՝ 2 հոգու: Ընդամենը 82 հոգու:

Ստացանք՝ Ա. Ահարոնեանի (Ղարիբ) «Ազատութեան ճանապարհին» «Յառաջ» գրադարան № 14, 413 երես, գինն է 80 կոպէկ, 2) Իւրիյ Վեսելովսկիյ «Очерки армянской литературы и жизни», 133 երես, գինն է 70 կոպէկ, 3) Ա. Ահարոնեանի «Разсказы» թարգմ. հայերէնից Ա. Գինզեանի, հրատ. Մ. Ս. Մալխազովի, 32 երես, գինն է 30 կոպէկ:

Իշխ. Վարվարա Ծերեթելին դիմել է նահանգապետին, խնդրելով թոյլ տալ իրան հրատարակել Թիֆլիսում վրացերէն ամենօրեայ լրագիր «Գզա» (ճանապարհ) անունով:

Ս. Գ. Կեկելիձէն դիմել է նահանգապետին խնդրելով թոյլատրել հրատարակել Թիֆլիսում վրացերէն ամենօրեայ լրագիր «Շուամավալի» (միջնորդ) անունով:

Ինչպէս հաղորդում է «Рус. Слово» լրագիրը, հոկտեմբերի 18-ին Պ. Ա. Ստոլիպինը ընդունել է Քութայիսի նախկին գեն.-նահանգապետ Ալիխանովին: Խօսակցութիւնը տևել է 2 ու կէս ժամ:

Հոկտեմբերի 24-ին, երեկոյեան ժամը 10-ին Անդրէևսկի փողոցում, մաքսատան դիմաց, 2 զինված չարագործներ յարձակվում են էլէքտրաքարշի կոնդուկտոր Վասիլիյ Զուբեեվի վրայ և, խլելով 9 ր. 84 կոպ., անյայտանում են:

Հոկտեմբերի 24-ին, ցերեկվայ ժամը 4-ին, Մօլօկանսկի փողոցում գտնվող Իվան Մադուրկեվիչի բնակարանում թունաւորել է իրան կարբոլեան թթուով Օլգա Դաւիդովնա Ցեդերը: Հիւանդանոց տանելու ժամանակ ճանապարհին վախճանվել է:

Հոկտեմբերի սկզբներում երեկոյեան, Զանգեզուրի Կաւարտ գիւղում բանակ դրած զօրամասի վեց զինւորներ Կաւարտի ձորում շրջագայութիւն կատարելիս Կուլլուլու գիւղից երկու վերստ հեռու ենթարկվեցին դարան մտած թուրք-աւազակների գնդակահարութեան: Բանակ զինւորներն էլ իրանց կողմից սկսեցին պատասխանել, որից յետոյ աւազակները փախան: Եռանդուն միջոցներ են ձեռք առնված աւազակներին բռնելու համար:

Գորու գաւառից գրում են, որ հոկտեմբերի 16-ին, մի անյայտ չարագործ ատրճանակի գնդակով մահացու կերպով վիրաւորեց Միխայլովօ գիւղի բնակիչ ազնուական Իմանուէլ Դուէմի Մագրաձէին: Դէպքի տեղին մօտիկ կանգնած Գորիջկի գիւղի ուրյադնիկ Իժելին փորձ արեց բռնելու չարագործին և երկու անգամ պարպեց ատրճանակը, որին չարագործը ևս պատասխանեց երկու գնդակով, բայց անհետևանք անցաւ: Իժելին իր գնդակներով հետ միասին հետամուտ եղաւ բռնելու չարագործին, բայց վերջինս կարողացաւ անյայտանալ հրէական կվարտալում: Մագրաձէն ստացած վէրքից իսկոյն մեռաւ:

Ախալցխայից հաղորդում են, որ հոկտեմբերի 7-ին երեկոյեան ժամի 9-ին, անյայտ չարագործներ մտել են հրեայ Մալաշվիլիի կնոջ և կողոպտել տունը: Տարել են 500 րուբլի կանխիկ դրամ և 350 րուբլու արժողութեամբ ոսկեղէն ու արծաթեղէններ: Միջոցներ են ձեռք առնված չարագործներին բռնելու համար:

Հոկտեմբերի 28-ին, երեկոյեան ժամի 8-ին, կայանալու է տաքսաներ նշանակող յանձնաժողովի նիստը Թիֆլիսի հացթուխների և փուռերի բանւորների ներկայացուցիչների մասնակցութեամբ, հացի գինը փոփոխութեան ենթարկելու հարցի մասին խորհրդակցելու:

Որովհետև քաղաքային հողերի և կալուածների կապալառուներից շատերը չեն վճարում քաղաքին հասանելի կապալագումարները, ուստի քաղաքային վարչութիւնը որոշել է դատարանի միջոցով պահանջ յայտնել այդպիսիների դէմ և պահանջել լուծանել կապալը ու քաղաքի հողերը ու կալուածները տալ ուրիշ անձանց:

Քութայիսից հեռագրում են «Отг.» լրագրին Չիաթուրի գծի վրայ տեղի ունեցած գնացքի մասին հետևեալ մանրամասնութիւնը. «Սալխաթի կայարանից դէպի Կվիրիլա գնացող ճանապարհի ռէլսերի վրայ դրել են պետարդ, որը, գնացքը անցնելիս պէս պայթեց և վախեցած մեքենավարը գնացքը կանգնեցրեց: Ժողովուրդը դեռ ուշքի չէր եկել, երբ յանկարծ երկու կողմից հրացանաձգութիւն սկսվեց. հրացանաձգութիւնը շարունակվեց մի քանի րոպէ և պատուհանի վագոնում ընկան մի քանի գնդակներ. մի փոքր ժամանակից յետոյ հրացանաձգութիւնը դադարեց և ուշքի եկող գնացքի ծառայողները վճռեցին գնացքը առաջ տանել և վտանգաւոր տեղից անվնաս ազատվեցին: Վնասվածներ չը կան: Ադմինիստրացիան ամեն միջոցներ գործ է դնում յարձակվողներին գտնելու»:

Յայտնի վիպասան Ի. Ս. Բուլգակովը յանձնված է զինւորական-նահանգական դատարանին: Նա մեղադրվում է իր յեղափոխական նախկին գործունէութեան մէջ:

Մտադրվում է դիւրացնել հրէաների մուտքը ատամնաբուժական դպրոցները, պահանջելով միայն մասնաւոր ուսումնարանների 6 դասեան աւարտման վկայական և թոյլատրել ատամնաբուժական դպրոց ցանկացած տեղում:

Մօտիկ ապագայում սպասվում է մի նոր ակտի հրատարակութիւն՝ ընդհանուր պարտադիր ուսման մասին:

Մօտ օրերս Դուշեթի գաւառի Սոլենի պոստայի կայարանում, երեկոյեան էքսպրոպրիատորները քշել տարել են պոստատար կառքը դրամական ծրարներով: Էքսպրոպրիատորները օգտվել են նրանից, որ պոստատարը և կառապանը ծառայութեան գործով, թողած են կառքը ու փոխելում: Որոնելու համար գործ դրված ջանքերը անօգուտ անցան, միայն լուսաբացին աջողվեց գտնել անտառում Սոլենիից 1/2 վերստ հեռու կառքը և ձիաները: Կառքի յատակը թափթփված էին բացված ծրարները: Կային երկու ծրարներ փողով լի ընկած էին կառքի մէջ, երևի, չէին նկատել: Դրամական ծրարներից պակասում է 150 րուբլի: Իսկ թէ փոխադրութիւններից որքան են տարել առայժմ պարզված չէ:

Հոկտեմբերի 4-ի գիշերը Ղազախի գաւառի Մարգալիք գիւղի բնակիչներ Բաղիր Մաշադ օղլին, Ալեքպեր Հասան օղլին, Ուսուբ Իսա օղլին և Ալլահկուլի Հասան-օղլին հրացանի գնդակներով երեք տեղից վիրաւորել են Ղարաքաչա գիւղի բնակիչ Օհանէս Բարսեղեանցին: Չարագործները տարել են վերջինի ձին և պայուսակը իրեղէններով միասին:

Կառավարիչ սենատի քարտուղար Ի. Խ. Ձավրիեվը հրաժարվել է ստորագրութիւն տալ որ չէ պատկանում քաղաքական օպպոզիցիոն կուսակցութիւններին, յայտնելով, որ ինքը պատկանում է ժողովրդական ազատութեան կուսակցութեանը և նրանից էլ հեռանալու մտադրութիւն չունի: Նրա դրութիւնը անորոշ է, որովհետև այդ միջադէպի առիթով գրագրութիւնը շարունակվում է:

Վարշավայի համալսարանի խորհուրդը ուղարկել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրին իր որոշումները համալսարանին արված բոլոր առաջարկութիւնների մասին: Խորհուրդը հնարաւոր չէ համարում վերսկսել պարապմունքները Վարշավայի մէջ գոյութիւն ունեցող դրութեան շնորհիւ:

Ռուզայից «Око» լրագրին հեռագրում են, որ ազնուականութեան ժողովի որոշումը՝ իշխան Դոլգորուկովին պատժելու համար, մեծ զայրոյթ է պատճառել գաւառի [illegible] նուականութեան մի մասին, որը սենատին այդ առիթով բողոք է ուղարկում:

—

«Вор. Сл.» լրագիրը հաղորդում է, որ Նովոխոպերսկի գաւառում տեղական գիւղացիական բանկը գնել է մեծ իշխանների 6000 դեսեատին հողերը, որոնք գնահատված են 623,000 հազար րուբլի:

—

«Сиб. Р.» լրագիրը հաղորդում է, որ մօտ օրերումս Չիտայում, երկաթուղային գնացքների վագոնները դիտելու ժամանակ, պահեստի գծի վրա պատահաբար գտնվել է պօստատար 6 վագօն, որոնք ուղարկվել էին Ռուսաստանից դեռ ևս անցեալ տարի դեկտեմբերին...

—

Ինչպէս գրում են «Рѣчь»-ին, Բեսարաբիի նահանգի Սպասսկի գաւառում ներկայումս գոյութիւն ունեն գիւղացիական կազմակերպութիւններ, որոնք հետզհետէ վայելում են գիւղացիների վստահութիւնը և սկսում են ղեկավարել նրանց գործերը: Կազմակերպութիւնների մէջ առ այժմ կապը շատ թոյլ է, այնպէս որ իւրաքանչիւրը գործում է աւելի կամ պակաս չափով անկախ կերպով:

—

Հոկտեմբերի 20-ին դատաստանական կարևոր գործերի քննիչի մօտ են կանչվել են հարցաքննութեան համար իբրև մեղադրվողներ Պետական Դումայի նախկին անդամներ. Կովալևսկի, իշխ. Դոլգորուկով և Անտոնով:

—

«Р. С.» լրագրին Պարիզից հեռագրում են, որ դեսպան Նելիդովը ծերութեան պատճառով հրաժարվում է իր պաշտօնից: Պետերբուրգից հաղորդում են պարիզեան լրագրներին մի անհաւատալի լուր, որ Ստոլիպինը կը թողնի պրեմիերի պաշտօնը Պետական Դումայի սկսվելուց առաջ: Նրա հաւանական յաջորդն է համարվում կոմս Վիտտէն, եթէ միայն նրան ազատութիւն տրվի աշխատակիցների ընտրութիւնը անձամբ անել, բայց նրան ներքին գործերի մինիստր են առաջարկում Դուրկօին, որին նա համաձայնվել չէ կարող:

—

Պետերբուրգից հեռագրում են Լօնդօնի «Tribune» լրագրին, որ, իբրև թէ, մտադրութիւն կայ 200-ից մինչև 300 միլիօն. ր. փոխառութիւնը կատարել դեկտեմբերին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ, 24 հոկտեմբերի: Սենատում և պալատում այսօրվայ դեկլարացիայի մէջ կառավարութիւնը մատնացոյց արեց, որ ներկայ մինիստրութիւնը վերակազմվեց ոչ թէ պարլամենտական կրիզիսից, այլ այն պատճառով, որ նախկին մինիստր-նախագահ Սարիէնի առողջութիւնը չէր թոյլ տալիս իր պաշտօնում մնալ: Յետոյ դեկլարացիայի մէջ ասում է, որ երկիրը ցանկանում է պահպանել խաղաղութիւն, ցանկանում է պահպանել հասարակաց իրական հիմնարկութիւնները. խաղաղութիւնը քաղաքակրթված ժողովրդների մէջ հիմնվում է զինուորական ոյժի վրա, ամենաառաջին պարտականութիւնը մեր հայրենիքի առաջ նրանում պէտք է կայանայ, որ թոյլ չը տանք թուլանալու մեր ինքնապաշտպանութեան ոյժերը: Մեր պարտականութիւնը ընդունելով բարելաւելու մեր յարաբերութիւնները բոլոր պետութիւնների հետ, մենք հոգ կը տանենք պահպանելու մեր դաշնակցութիւնը Ռուսաստանի հետ և բարեկամական յարաբերութիւնները միւս պետութիւնների հետ: Ներքին քաղաքականութեան մէջ մենք կը ձգտենք դեմօկրատիան կազմակերպելու և ուժեղացնելու, որպէսզի առանձնակի պետական իշխանութիւնների երևոյթները աւելի չափաւոր ձև ընդունեն: Այդ է նպատակը, որ իրանց համար բոլոր հասարակապետականները պարտաւոր են ընդունել, նախ քան փիլիսոփայութիւններ անելը՝ հարկաւոր է որ գոյութիւն ունենալ, և հէնց դրա համար էլ մենք պէտք է մանրազնին կերպով հետևենք մեր զինուորական ոյժերի զարգացման, որպէսզի միշտ պատրաստ լինենք զանազան պատահարներին տանք համապատասխան ընդդիմադրութիւն: Դեկլարացիան վերջանում է հետևեալ խօսքերով: «Հասարակապետութիւնն էր պատճառը, որ Ֆրանսիայում երևան եկաւ իսկական ազատութիւնը: Այժմ մենք պէտք է հասարարակապետութեան ռէժիմի բոլոր գիւղերում՝ ամրապնդել ազատութիւնը, և տանք նրան հնարաւորութիւն, որ նա առանց խոչընդոտների կարողանայ զարգանալ:»

ՌԻԳԱ, 24 հոկտեմբերի: Զինուորական-դաշտային դատարանը մահվան դատապարտեց 5 կոմմունիստ անիշխանականների, որոնք կատարել էին կողոպտելու նպատակով մի քանի զինված յարձակումներ:

ՊՕՐՏՍՄՈՒՏ, (Անգլիա) 24 հոկտեմբերի: Ծովային վարչութեան հրացան շինող արհեստաւորները, հաւաքվեցին զօրանոցների մօտ, և երբ սաստիկ անձրև եկաւ, առանց հրամանի ներս մտան զօրանոցները և մի րոպէից յետոյ մտան գիմնաստիկական դահլիճը: Հերթապահ օֆիցերը, որ կարճ հասակով մի մարդ էր հրամայեց, առաջին կարգում կանգնողներին չոքել, որպէսզի վերջիններին կարողանայ տեսնել: Մի քանի նաւաստիներ տատանման մէջ ընկան, չը գիտենալով արդեօք կատարեն հրամանը թէ ոչ, իսկ նաւաստիներից մէկը հրաժարվեց հրամանը կատարելուց և որի համար կալանաւորվեց: Դրանից յետոյ նաւաստիները սկսեցին աղմուկ բարձրացնել, բայց շուտով ցրվեցին: Կէս գիշերին տեղի ունեցան մեծ անկարգութիւններ, որ տևեցին մինչև առաւօտ: Մի քանի հարիւր բանուոր նաւաստիներ ջարդեցին օֆիցերների բնակարանների ապակիները և յարձակվեցին օֆիցերների վրա և ծեծեցին ոստիկաններին: Կանչված զինված նաւաստիների վաշտը կարգը վերահաստատեց: Ապստամբներից շատերը կալանաւորվեցին:

ՄԱՆՉԵՍՏՐ, 24 հոկտեմբերի: Ռուսաց կառավարութեան պահանջով՝ կալանաւորվեց ռուսաց հպատակ Ջինգերը: Ջինգերը մեղադրվում է մի քանի ոստիկանների սպանութեան և զօրանոցը ռումբ նետելու մէջ: Ջինգերը 18 տարեկան է: Նա իր յանցանքները չի բացասում:

25 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 հոկտեմբերի: (Պաշտօնական): Հոկտեմբերի 21-ին Բարձրագոյն հաստատված է մինիստրների այն ցուցակը, որով թելադրվում է արգելված ժամանակաւոր անդրանկութեան, աւատական և հոգևոր վարչութիւնների հողատէրերին ծախելու գիւղացիներին իրանց կալուածքների հողերը: Համաձայն այդ ցուցակի, Պետական Օրէնքների ժողովածուի 87-րդ յօդուածի հիման վրա (Օրէնք. ժող. 1 հատոր, 1 մաս) փոփոխութիւնների և որոշումների կարգի համար որոշվում է հետևեալ կարգը. 1). արգելված հողերի, անդրանկութեան և աւատական կալուածքների տէրերին թոյլատրվում է արևմտեան նահանգներում և Լեհական թագաւորութեան մէջ անդրանկութեան և հոգևոր վարչութիւնների տրամադրութեան տակ գտնված հողերը գիւղական բանկի կամ առանց նրա միջնորդութեան ծախելու գիւղացիներին կամ կայսրութեան մէջ գտնվող մանր սեփականատէրերին, որոնք իրանց ստացուածքով չեն զանազանվում անհող գիւղացիների դրութիւնից առանց խարութեան ծագման և դաւանութեան. եթէ այդ հողերը գնողները հողեր են ունենում, որոնք ընկնում են յիշեալ կալուածքների սահմաններին, կամ թէ կապալով են վերցրած այդ կալուածքներից և եթէ արքունական հողերի ծախման անհրաժեշտութիւն է զգացվում՝ լայնացնելու համար գիւղացիական հողատիրութիւնը (օրէնք. ժողով. եր. 1399) պէտք է ներկայացնել գաւառական հողային բարեկարգութեան մասնաժողովների ներկայացուցչութեան, իսկ եթէ այն տեղերում, որտեղ որ մասնաժողովները գոյութիւն չունեն—նահանգական գիւղական վարչութիւններին... (հեռագիրը բաց է թողված) 2) Արգելված հողերի մասերը ծախելու ժամանակ (եր. 1-ին) հարկաւոր է հետևել, որ ծախելուց յետոյ մնացած կալուածքի մասը լինի ոչ պակաս այն չափից, որը որոշված է Քաղաքացիական Օրէնքների 470-րդ երեսում (օրէնք. ժողով.) հատ, 10. մաս. 1 հրատ. 1900 թ.): 3) Հողատէրերի խնդիրքները թոյլատրելու ծախսելու իրանց կալուածքների հողամասերը, որոնց կարգը որոշված է ներկայ կանօնների առաջին երեսում—պէտք է ներկայացվեն հողային բարեկարգութեան մասնաժողովներին, իսկ այն տեղերում, որտեղ գոյութիւն չունեն յիշեալ մասնաժողովները, պէտք է դիմեն նահանգական գիւղական վարչութիւններին, որից յետոյ այս հիմնարկութիւնները այդ խնդիրքները իրանց որոշման հետ միասին ուղարկում են կոմիտէա (?) հողային բարեկարգութեան գործերով: Եթէ կոմիտէտը այդ խնդիրքը բաւարարութիւն չի տալիս, այդ դէպքում հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը մի առանձին խնդիրքով դիմում է կառավարչական սենատին, դատաստանական դեպարտամենտի միջոցով՝ թոյլատրել ծախելու արգելված և անդրանկութեան կալուածքների հողերը. իսկ աւատական և հոգևոր վարչութեան հողերի ծախումը թոյլատրում է սեփական իշխանութեամբ ֆինանսների մինիստրների հետ համաձայնութեան գալուց յետոյ:

4) Այն փողերը, որոնք ստացվում են յիշեալ կալուածքների ծախումից յետոյ, բացի հոգևոր վարչութեան կալուածների ստացուածից—պէտք է մտնեն պետական բանկը և կամ նրա բաժանմունքները: Բանկում յիշեալ գումարները պահում են որպէս անձեռնմխելի կապիտալներ, իսկ այդ կապիտալների տէրերին թոյլատրվում է օգտվել (?) միայն տոկոսներից: Այդ գումարները հաշվում են որպէս փոխանակութիւն (?) ծախված հողամասերի և ենթարկվում կալուածքների համար նշանակված կանօններին:

5)... (հեռագրական խզումն)... Վարշավսկու, Կալիշսկու, Կէլեցկու, Լոմժինսկու, Լիւբլինսկու, Նէտրակօվսկու, Պոլօցկու, Րադօմսկու, Սուվալկսկու և Սէդլեցսկու նահանգներում հողագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչի և ֆինանսների մինիստրի համաձայնութեամբ, կարելի է թոյլատրել համապատասխան մասի արքունական պարտքից նոր հողատէրի վրա: Բաժան. 2. հողագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչին յանձնարարւում է քննութեան ենթարկելու այն հարցը, որով թոյլատրվում է արգելված, անդրանկութեան, աւատական հողատէրերի կալուածքներից վաճառած հողերի փողերը, ներկայ կանոնադրութեան 1 բաժնի հիման վրա ծախսել այդ գումարները մնացած հողերի տնտեսութեան բարելաւութեան վրա և այս որոշումը ֆինանսական և արդարադատութեան մինիստրների փոխադարձ համաձայնութեամբ, ընդունված կարգով ներկայացնել օրէնսդրական քննութեան համար:

ՎԱՐՇԱՎԱ, 24 հոկտեմբերի: Կուտնէում յեղափոխական ձեռքով սպանված 17 օֆիցերների մասին տարածված լուրերը—հիմքից բոլորովին զուրկ են:

ՍԱՄԱՐԱ, 24 հոկտեմբերի: Գիւղացի Գրաչէվի բնակարանը մտան աւազակներ, որոնք զինված էին հրացաններով. սպանեցին Գրաչէվին, նրա քրոջը, հօրը, և երկու աշխատաւորների ծանր վիրաւորեցին. տանտիրուհուն, մի աշխատաւորի, թոռան բոլորովին ծնկան բերեցին և սուրիններով ծածկոտեցին:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 24 հոկտեմբերի: Այսօր վերսկսվեցին զինուորական-ծովային դատարանի նիստերը նոյեմբերեան ապստամբութեան գործի առիթով, որը դադարեցրված էր գործերը գողանալու պատճառով: Դատավարութիւնը տեղի է ունենում դռնփակ: Պաշտպաններ են կանչված մէկ քաղաքացու և երկու զինուորականների: Մեղադրեալները 272 հոգի են: Դատավարութիւնը կը տևի երկու ամիս:

ՌԻԳԱ, 24 հոկտեմբերի: Զինուորական-դաշտային դատարանի մահվան դատավճիռը 6 կոմմունիստ-անիշխանականի վերաբերեալ, այսօր ի կատար ածվեց:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերի

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Չ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ի. Կ. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ՆԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Յ. Գուրգենօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ—7—7⅓ ժ. ներքին և երեխայոց հ.:

Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (գոնսուլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8: Կանանց համար 12—1 ժամը:

Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկևիչի փողոցների,, № 33/15:

(ա. օ.) 39—100

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Գ. Զախարբէգեանց

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ եւ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
երեկոյեան 6—7 ժ.

Տելեֆօն № 1087

Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.

(ա. օ.) 37—150

„Գուտտենբերգ"

գրավաճառանոցում վաճառվում են հետևեալ գրքերը.

Տօքթ. Կ. Յ. Փաշայեան, վիպական հաւաքածոյ Միշէլ և Քիլիլին. լուսանկարը 10 կ.
» վիպական հաւաքածոյ, Վառօ, 10 կ.
Ֆէթվաճեանի, Անիի ալբոմը, 1 ր. 20 կ.
Աստուածաշունչ, Երեխէեանց, 35 կ.
Անննեսկայա, Հայրապետութիւն, Թարգ. Ս. Տ. Անանեանի 5 կ.
Լումպեն պրոլետարիատը և յեղափոխութիւնը, Թարգ. ռուս. Ա. Ս. 5 կ.
Շահազիզ, Ս. Խորէնի արք. Գալֆայեանի և Նալբանդեանի, Աղձնիքը 60 կ.
Մ. արքեպիսկոպոս Սմբատեան, Նկարագիր Երնջակայ ս. Կարապետի Վանուց և շրջակակայից Նորին 1 ր. 50 կ.
Դր. Կ. Փաշայեան խան, Ընդարձակ Դպրոցական Առողջապահութիւն, պատկերազարդ (120 պատկերով) 6 ր.
Ինտրա, Ներաշխարհ 1 ր. 20 կ.
Ժան-Ժակ Ռուսօ, Էմիլ, երկրորդ գիրք Թարգ. գիրմ. Ի. Յարութիւնեանի 50 կ.
Արեան ձայներ 60 կ.
Ս. Հայկունի, Էմինեան ազգագրական ժողովածու հատոր Զ. 1 ր. 25 կ.
Ջէյմս Մօրիէր, Հաջի Բաբայի արկածները Անգլիայում, Թարգ. անգլ. Մկր. Կարապետեան 1 ր. 50 կ.
Տկն. Մէրի Ուլոտ Ալէն, Ի՞նչ պէտք է գիտնայ դեռատի աղջիկ մը, Թարգ. անգ. Մ. Շամտանճեան 70 կ.
Ղ. Մ. Ս. Շուղի բաջու նամակը Շուշվայ-Ղալի կընանոց, Ղարաբաղի-Շուշվայ բարբառով 50 կ.
Էդմօնդօ դօ Ամիչիսի, Սիրտ (10 պատկերով) Թարգ. անգլ. Ս. Քամալեանցի 40 կ.
Ս. Քամալեանցի, Սասունցի Յովհան 30 կ.
Էմին Տէր-Գրիգորեանի, Սուր և Հուր (Ո՞վ է մեղաւորը) էպիզօդներ հինգ պարբուածով և պօթեօզով 1905 թւի հայ-թաթարական ընդհարումներից) 1 ր.
Դօկտ. փիլ. Մ. Աբեղեանի, Աշխարհաբարի քերականութիւն, դասագիրք ստորին դասարանների համար 75 կ.
Ի. Վազօվ, Լծի տակ, երկրորդ մաս 50 կ.
Կ. Բարանցեվիչ, Երկու ոգի, Թարգ. Ս. Մընջոյեանի 15 կ.
Ա. Ն. Բախ, Հարուստներ և աղքատներ 15 կ.
Եպիսկոպոս Գէորգեան (Ճուղուրեանց) Ճըշմարտութիւնը չի մեռնում 50 կ.
Տօքթ. Կ. Յ. Փաշայեան խան, վիպական հաւաքածոյ, Ճակատագիր 10 կ.
» Վարժապետին պլատոնական սէրը 10 կ.

Դիմել՝ Книжный магазинъ «Гуттенбергъ».

1—2

ԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐՔՈՅԿՆԵՐ

1. «Սիրտ» գրքից 9 պատմ.	դերման.	40 կ.
2. Ժամանակը ոսկի	պատկեր.	40 »
3. Քաջ Աղասի		25 »
4. Սասունցի Յովհան	պատմ.	30 »
5. Խուլ Խաչիկ	վէպիկներ	25 »
6. Ծովինար		20 »
7. Շէն թագաւորի աղջիկ		20 »
8. Երկու ապերացեղ.		30 »
9. Աստուած աղքատի կերպում		20 »
10. Անմեռ աշխարհ		8 »
11. Հէքիաթներ		30 »
12. Աստուած չը ճանաչող	պատկեր.	10 »
13. Գալօ Ափօ և Խաչան		12 »
14. Երկասիրութիւններ ա. կապուկ		50 »

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին, գումարով ցանկացողները իրան՝ Քամալեանց Ս.-ին, Ներսիսեան դպրոց: (չ. ու. կ.) 11—20

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

պատրաստ են վարելու

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆ

Ամուսինը Պետերբուրգում համալսարանի ուսանող, թեմականաւարտ. կինը կար ու ձև, ձեռագործ, սովորած մանկաբարձական ինստիտուտի ուսանողուհի: Ցանկալի է գիւղում:

Հասցէն՝ Головинскій 15, магазинъ Бижутери, Միքայէլին:

(հ. ու.) 1—2

ԿԷՖԻՐ ԵՒ ԿՈՒՄԻՍ

պրոֆէսոր Մեչնիկօվի մէթօդով պատրաստած լեկտորացիլեան մածուն կարելի է ստանալ

Օ. ԿՕՐՕՆԱՅԻ

ԿԱԹՆԱՏՆՈՒՄ:

Լօրիս-Մելիքեան փող. վրայ սեմինարիայի դիմաց: Ցանկացողներին կարելի է է յանձնել տներում:

(շ. ե. հ.) 1—3

Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

ամեն տեսակ պտղատու ծառերի պատուաստներ և նոյնպէս տունկեր էժանագին գներով ծառացուցակներն ուղարկվում են ձրի ըստ պահանջման:

Հասցէն՝ Г. Гори, Тифл. губ. К. О. Африкіанъ.

(ե. հ. կ.) 1—15

ՀՐԱՒԷՐ

Կուկիայի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցու ամսիս 22-ին, նշանակված երէցփոխի ընտրութեան ծխական ժողովը չը կայացաւ ծխականների օրինական թիւը չը լինելու պատճառով, ուստի սրանով յիշեալ եկեղեցու յարգելի ծխականները երկրորդ և վերջին անգամ հրաւիրվում են ամսիս 29-ին, կիրակի օրը ժամը 12-ին, նոյն եկեղեցին, կատարելու նոր երէցփոխի ընտրութիւն՝ հանգուցեալ Նիկողայոս Գրիգորեանցի փոխարէն:

Գործակալ Յով. աւագ քհ. Մարտիրոսեանց

(հ. կ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցու երգեցիկ երկսեռ քառաձայն խումբը սկսել է իր պարապմունքները, որի ընթացքում մասնակցող անդամները սովորելու են և եւրօպական նօտաներ: Ընդունվում են սիրող երգիչներ և երգչուհիներ. ցանկացողները պարապմունքներից յետ չը մնալու համար մինչև ամսիս 28-ը թող շտապեն դիմել խմբապետ Ա. Մանուկեանին, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը երեկոյեան ժամի 4-ից մինչև 5-ը Նորաշէնի ս. Մարիամեան դպրոց:

(հ. շ.) 1—2

Մի հայ վարժուհի

ընդունում է իր մօտ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
և
ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ

տալիս է սենեակ, ճաշ և պարապում է:

Գները մատչելի են:

Հասցէն՝ հարցնել «Մշակի» խմբագրատանը Նոյն ընտանիքում տրվում է ՃԱՇ: 3—5

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ընտանիքի տէր, փնտռում է կանտորշչիկի, պրիկաշչիկի կամ թէ գրագրի

ՊԱՇՏՕՆ

Ունի լաւ երաշխաւորներ. դիմել՝ 1-ая Гончарная № 5, Терь-Багдасарянцу.

(ե.հ.կ.) 3—5

Փորձված Ուսուցչուհի

որոնում է մասնաւոր ԴԱՍԵՐ:

Հասցէն՝ «Մշակ»-ի խմբագրատանը: 8—10

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Ա. Վ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Ընդունում է դիմողներին

Հասցէն՝ Орловская 5. 4—5

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻՒՐԱՆՈՑԸ շքեղ կանկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրաւօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց

„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ"

մականունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:

Ալէքսանդր Յարութինօվ

(ե. կ. ե.) 26—100

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.

(ա. օ.) 265—300

3 ՌՈՒԲԼԻ 3 ՌՈՒԲԼԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ"

պատկերի երկրորդ էժանագին հրատարակութիւնը,

որի միակ նպատակն է հնարաւորութիւն տալ իւրաքանչիւր հայի ունենալ այդ ազգային նուիրական յիշատակը:

Ի նկատի ունենալով, որ այս նպատակին հասնելու գլխաւոր պայմանն է գնի էժանութիւնը, բացի այն, որ առաջի հրատարակութիւնից մնացած քարերը բաւականին էժանացնում են այս հրատարակութիւնը—վճռեցի բացառապէս միայն ինքս վաճառել և այն 25—30% օգուտը, որ պէտք է ստանային վաճառականները, զեղչել նախկին (5 րուբ.) գնից և այսպիսով հասցնել գինը մինիմումի՝ այն է

3 րուբլի ճանապարհածախսով:

Ինձ մօտ վաճառվում է նոյնպէս արծաթից շինված

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՕՇՄԸ,

որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար.

Գինն է 3 րուբլի ճանապարհածախսով:

Առանց կանխավճարի չէ ուղարկվում:

Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24, В. Варданяну.

(ե. հ.կ.) 8—10

3 ՌՈՒԲԼԻ 3 ՌՈՒԲԼԻ

ՀՐԱՒԷՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ԿԱՊԻՏԱԼ

ՀԱՏՈՐ I

Հայերէն լիակատար թարգմանութեամբ եւ հրատարակութեամբ Ստրասբուրգի համալսարանի պետակ. եւ իրաւաբ. գիտութիւնների դօքտոր

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

պիտի սկսի տպագրվել առաջիկայ յունվար ամսից:

Թարգմանութիւնը գերմաներէն բնագրից, որը կազմում է մօտ 800 խիտ տպած մեծադիր էջեր՝ բազմաթիւ և մեծածաւալ ծանօթութիւններով և Մարքսի ու Էնգէլսի չորս յառաջաբաններով:

Հատորը լոյս է տեսնելու 7 պրակներով՝ համեմատ հատուածների թւին, որոնց խորագրերն են՝

I—Ապրանք և փող (3 գլուխ), II—Փողի կապիտալ դառնալը (4 գլ.), III—Բացարձակ աւել-արժէքի արտադրութիւն (5 գլ.), IV—Յարաբերական աւել-արժէքի արտադրութիւն (4 գլ.), V—Բացարձակ ու յարաբերական աւել-արժէքի արտադրութիւն (3 գլ.), VI—Աշխատանքի վարձը (4 գլ.), VII—Կապիտալի կուտակման պրոցէսը (5 գլ.):

Ծանօթ. Գիրքը, բացի թէօրիական նուրբ անալիզներից, պարունակում է նաև տնտեսական զարգացման տեսութիւններ՝ գլխաւորապէս անգլիական կեանքից, որպէս տնտեսապէս ամենազարգացած երկրից:

ԲԱԺԱՆՈՐԴԱՎՃԱՐՆ է 3 րուբլի 50 կոպ. (=9 ֆրանկ) պօստի ծախքով միասին՝ այժմեանից մինչև առաջիկայ դեկտեմբերի վերջը բաժանորդ գրվածների և գինը վճարածների համար: Գիրքը լոյս տեսնելուց յետոյ՝ գինը զգալապէս կը բարձրացվի:

Բաժանորդագրութեան համար դիմել՝ Тифлисъ, книжная торговля «Гуттенбергъ» կամ հրատարակչին՝ Тифлисъ, А. М. Арасханянцу, Кадетскій пер. 11: Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase), Librairie «Guttenberg» և կամ Tiflis, A. M. Araskhaniantz, Kadetski péréoulok 11.

Ամեն բաժանորդ՝ թէ Թիֆլիսից և թէ այլ տեղերից՝ կը ստանայ անդորրագիր:

(ն. հ.) 15—20

Դուխի

„Sweet Pea."

Բրօկար եւ Ընկ. (ամեն տ. 25) 2—8

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

լոյս են տեսել

կրօնի հետևեալ դասագրքերը.

Աշակերտական բաժին

1) Դասատետր կրօն՝ ա. տարի	25 կ.	25%
2) » » բ. »	20 կ.	20% զեղչ
3) » » գ. »	30 կ.	
4) Հին-ուխտ	35 կ.	
5) Նոր-ուխտ	40 կ.	
6) Գործք առաքելոց	40 կ.	

Ուսուցչական բաժին

1) Մեթոդիկայ Հին-ուխտի	1 ր. 75 կ.	35% զեղչ
2) » Նոր-ուխտի	2 ր. 5 կ.	
3) Ուսուցումն քր. կրօնի Դ.	1 ր. 50 կ.	
4) » » » Ե.	— 50 կ.	
5) Տասն պատուիրան	— 50 կ.	

Ցանկացողները կարող են դիմել՝
1) Սահակ քահ. Սահակեանցին, Комерч. училище.
2) «Գուտենբերգ» գրավաճառանոց.
3) Կենտրօնական գրավաճառանոց (центральная).

Ինձ դիմողները ստանում են վերոյիշեալ տոկոսը:

Սահակ քահ. Սահակեանց

(ե. հ. շ.) 16—20

Էժանագին եւ ձրի ճաշարանի ԵՒ ԹԷՅԱՐԱՆԻ

Ընկերութեան մասնաժողովը հրաւիրում է ցանկացողներին՝ յանձն առնել օրական մօտ 10 փութ թխած հաց մատակարարելու ընկերութեանը

Պայմանների մասին դիմել ընկերութեան նախագահ տ. Հեղինէ Ալթունիկեանին մինչև նոյեմբերի 4-ը ամեն օր ժամը 10—12-ը:

Հասցէն՝ Գրիբոեդովսկի փող. տուն № 26.

(ե. հ. շ. կ.) 4—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. Տէրմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնօվի № 7. պօդէդ նօտար Մղերօվի:

(ե.հ.շ.) 68—100

Գ. Ե. ԱՒՍԱՐԳԻՍՕՎԻ

ԱՅԳԵՏՆԿԱՐԱՆԸ

բաց է թողնում պտղատու ծառեր արտասահմանեան, ռուսաց և կովկասեան տեսակի: Հասցէն կայարան Սկրա (ст. Скра зак. ж. д. Авсаркисову: Կատալոգը ուղարկվում է ձրի: 10—10

Լոյս տեսաւ

ՋԵՅՄՍ ՄՕՐԻԷՐԻ

ՀԱՋԻ ԲԱԲԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

վէպ պարսկական կեանքից
հատոր երկրորդ
(320 երես)
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

«Հաջի Բաբայի» երկու հատորի գինն է 3 ր. 50 կոպ (720 երես): «Մուրճի» տարեկան բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում և 2 հատորի համար ուղարկում են միայն 2 րուբլի:

10—10

Լոյս տեսաւ

Ա. ՋԱՆՆԵԱՆԻ

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գինն է 10 կոպ.: Դիմել՝ գրավաճառներին:

7—10

Երևանի Հայոց Թեմական դպրոցի հոգաբարձութիւնը

յայտնում է, որ Թիֆլիսի Հայոց նախկին Հրատարակչական Ընկերութեան դպրոցին նուիրած գրքերը վաճառում է գումարով գնել ցանկացող գրավաճառներին, ուսումնարաններին և գրադարաններին 50% զիջումով:

Ցանկացողներին կուղարկվի նոյն գրքերի տպագրված ցուցակը:

Դիմել Հոգաբարձութեան հասցէով:

2—5

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽՍԱՅԵԱՆԻ

„ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ"

Պատկեր հայ-թուրքական կռիւներից
(24 երես)
ԳԻՆԸ 7 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի գրախանութներին:
ԳՈՒՄԱՐՈՎ ԶԵՂՉ

3—5

Լոյս տեսաւ

Հայկ Տէր-Աստուածատրեանցի

Հայ վաճառականութիւնը Բուխարայում

Գինը 50 կոպ.

Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին և կամ Тифлисъ, Айку Теръ-Аствацатряну, Панасевича улица № 1.

Հեղինակին դիմողը ճանապարհածախս չէ վճարում:

4—4

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5